



1901

Ս. ԷԶՄԻԱԺՆԻ ՏԱՄՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ  
ԴԱՐԱԴԱՐՁԸ



ՌԱԶԻԿԱՅ 1901 տարին, որ ընդհա-  
նուր թուականի վրայ մեծ նշա-  
նակութիւն ունի, իբր քաներորդ  
դարազրուի թուականին Քրիստո-  
սի, Հայոց համար մասնաւոր նշա-  
նակութիւն կստանայ, որովհետեւ  
ճիշդ 1600 տարի կը լրանայ Ս. Լու-  
սաւորչի Վիրապէն ելնելու թուա-

կանէն, կամ ուրիշ բացատրութեամբ մեր ազգի լուսաւ-  
րութեան թուականէն. Դիտմամբ կը գործածեմք լուսա-  
ւորութիւն բառը, զի քրիստոնէութիւն կանուի մտած  
էր մեր ազգի մէջ՝ մեր առաջին լուսաւորիչներուն՝ Ս. Թա-  
ղէոս և Ս. Բարդուղիմէոս առաքեալներու ձեռքով, և  
առաջին երեք դարերու մէջ քրիստոնէութիւնն անխափան  
մնացած էր ի Հայաստան, թէպէտև ոչ ազգի տիրող  
կրօնքն էր դարձած և ոչ էլ կատարեալ զարգացում ստա-  
ցած: Քրիստոնէութեան անխափան պահպանութեան  
փաստերն են՝ մարտիրոսաց վկայութիւններ, հայրապետաց

անուաններ, հայածանաց կրկնութիւններ և պատմական յիշատակներ, որոնք թէ ազգային և թէ օտար պատմութեանց մէջ ցրիւ կը գտնուին. և երբ խնամով զննուին և ուսումնասիրուին՝ պատմական անյիզլի ճշմարտութիւն կը կազմեն: Անծանօթ չեն մեզ այն քննադատութիւններ, որոնք մեր ազգային եկեղեցական և նախնական պատմութեան նկատմամբ եղան և կլինին թէ օտարազգի և թէ օտարամտ ուսումնասիրողներէ. և կ'ընդունիմք իսկ թէ շատ վիտնական և հանճարեղ լուսարանութիւններ կը բաղուին նոցանից: Սակայն պէտք է նա մոռնալ, թէ օտարազգին՝ որ ազգային տեղեկութիւնները և տեսութիւնները իրենց ընդարձակ և բազմակողմանի պարագաներով չէ կարող ըմբռնել, յաճախ մի ունէ մասնաւոր կէտէ կը զբաւուի և ամբողջական բաղդատութեան օգուտէն կը զրկուի. իսկ օտարամտը, որ իւր ազգային եկեղեցւոյն պատիւն ու իրաւունքը չէ խզում զոհել, կամայական մեկնութեանց և արտաքին թեղաբոլորութեանց մարմաջէն կը շփոթի: Մենք թէ՛ պարզապէս աւանդամուկարծեաց և թէ՛ քննադատութեան անդուն շփոթութեանց ծայրայեղութիւններէ խորշելով՝ ի պատիւ մեր ազգի լուսաւորութեան տասնևիցեորորդ դարադարձին կը ներկայեմք մեր երիցս երանեալ Լուսաւորչի ժամանակագրական և բաղդատական պատմութիւնը մեր ուսումնասիրութեանց համեմատ, և առանց մտնելու պատմութեան լրացուցիչ մանրամասնութեանց մէջ:

#### 1. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՌԱՋԻՆ ԿԵԱՆՔԸ

Գրիգորի հայրն է Անակ Պարթևաց թագաւորական ցեղէն: Արշակունեաց պարթևական ծագումը և պարթև Վաղարշակէն սերած լինելու պատմութիւնը դժուար է այլ ևս իրրև պատմական ստուգութիւն ընդունել, և հե-

տևաբար Հայ Արշակունիներն արտաքին պատմութենէն մեզ ծանօթ Արտաշիասի սերունդն են, որ Հռովմէական և Պարթևական հօր կայսերութեանց միջև բազդի ելևէջներով իրենց իշխանութիւնը վարեցին: Պատմական փաստերով կը հաստատուի նաև թէ մեր պատմութեան Խոսրովը, է նոյն ինքն արտաքին պատմիչներէն Արշակ կոչուած և Պարթևաց վերջին թագաւոր Արտաւանի եղբայրը: Անակ և իւր միւս եղբայրը (Ագաթ. 35) Սասանեան Արտաշիրի յանձնարարութեամբ դաւաճանեցին Խոսրովը: Արդ՝ Նիլիէի պատմութեան մէջ կը կարդանք թէ Տրդատ Խոսրովի որդին իւր հօր սպանութենէ յետոյ «փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց. ապրեալ սնու յերկրիդ Յունաց» (Յիլիշ. 133): Խոսրովին սպանողները Տրդատի հօրեղբայրները եղած ատեն, Արտաւան և Խոսրով և Անակ եղբայրներ եղած կը լինին, կամ առ նուազն ընդարձակագոյն իմաստով՝ իրարու հօրեղբորդիներ:

Գրիգորի ծննդեան տարին, ըստ ազգային պատմութեան, դաւաճանութեան միջոցին է: Նորա յղութիւնը եղած է յԱրտազ ըստ աւանդութեան Ս. Սահակայ (Խոր. Բ. 74), նոյն իսկ Անակայ գալու տարին. մինչ սպանութիւնը կատարուած է «յետ անցանելոյ երկուց ամաց գալստեան Անակայ ի Հայս»: ուրեմն Գրիգորի ծնունդը եղած է սպանութենէն մի տարի առաջ: Արդ՝ Արտաշիր Սասանեան, ըստ ճշդեալ հաշուոց, մեռած է 241-ին, ուրեմն Խոսրով սպանուած է առ նուազն 240-ին, և Գրիգոր ծնած է 239-ին:

Գրիգորի հեթանոսական անունը անծանօթ է ի պատմութեան, զի միամեայ մանուկ տարուած է Գեսարիա, և Եւթարդայ ձեռքով քրիստոնեայ եղած անմիջապէս և քրիստոնէական անունովը ծանօթացած: Այլ եթէ Անակայ երկրորդ դաւակի փախած և ազատած լինելը

հաւանական չէ, ինչպէս շատեր կը կարծեն, անյարմար չեմք կարծեր ասել թէ այս երկրորդ տղային տրուած Սուրէն անունը՝ նոյն ինքն Գրիգորի հեթանոսական անունն է:

Գրիգորի դաստիարակութիւնը խնամեալ եղաւ Գեսարիոյ մէջ, որ ժամանակուան ուսումնապէրճ քաղաքներէն մին էր, և իրեն համար գրուած էլ կը գտնեմք թէ «վարժեալ էր հելլենացի և ասորի դպրութեամբ» (Գլակ. 22):

Գրիգոր ամուսնացաւ, ըստ Խորհնացոյ, «Յարբունս հասակի հասեալ» (Խոր. Բ. 80), կամ ըստ Ջենոբայ «իբրև եղև երկոտասանամեայ» (Գլակ. 22), Բայց 12 տարեկան ամուսնանալը շատ կանուխ և անհաւատալի լինելով, հարկ կը սեպեմք երկարաձգել մինչև 22 տարեկան լինելը, որով նորա ամուսնութիւնը կը դնեմք 261-ին:

Գրիգորի կիներն է Մարիամ, դուստր Դաւիթ անունով մարդու ի Գեսարիա: Աթանազինէս եպիսկոպոս, օլնական եպիսկոպոսին Սեբաստիոյ իբր քորեպիսկոպոս Պիղաքտիոյ և ոչ եպիսկոպոս Գեսարիոյ Գապաղովկացոց, կը յիշուի պատմութեանց մէջ իբրև Լուսաւորչի խնամին: Դաշանց թուղթը կը կոչէ նորան եղբայր Մարիամու, բայց յայսմաւորաց մէջ կը կոչուի *անձը* Լուսաւորչի, որ աներձագի իմաստ ևս ունի ի գիրս (տես Բուզ. 12): Հաւանական է Դաւիթը ընդի սեբաստացի կարծել ի Գեսարիա գաղթած, կամ թէ Աթանազինէսը Գեսարիայէ Սեբաստիա դնացած ենթադրել: Լուսաւորչի ձեռնադրութենէ յետոյ Գեսարիայէ Սեբաստիա երթալը և միջոց մը այնտեղ մնալը Սեբաստիոյ հետ յարաբերութիւն ունեցած լինելու նշանն է:

Գրիգոր երկու զաւակ միայն ունեցած է, Վրթանէս և Արիստակէս, և այնուհետև շետ երկից ամաց երկուց որդւոց լինելոյ» (Խոր. Բ. 80), բաժնուած է իւր ամուսնէն: Սովորաբար այդ խօսքերը կը մեկնուին այնպէս թէ ա-

մուսնութենէն երեք տարի յետոյ երկու որդի ունեցած լինելով բաժնուած լինին, բայց աւելի լաւ է իմանալ այնպէս, որ երկու որդի ունենալէն յետ երեք տարի ևս անցնելով բաժնուած ասուի, որ ամուսնութենէն զոնէ վեց տարի յետոյ ասել է, և այս կերպով կը յարմարի ևս, որ «Մարիամ հանդերձ մանկամբն կրտսերաւ ի վանս կուսանաց անկեալ կրօնաւորիւր» (Խոր. Բ. 80), որ անհնարին պիտի լինէր եթէ ստնդեայ մանուկ ունենար Մարիամ: Ուրեմն Վրթանիսի ծնունդը կրնանք դնել 262-ին, Արիստակիսի ծնունդը 264-ին, և Գրիգորի իւր Մարիամ ամուսնէն բաժնուելը 267-ին:

## 2. ԼՈՒՍԱԵՒՈՐԻՉ ԵՒ ՏՐԴԱՏ

Լուսաւորչի իւր ամուսնէն հեռանալուն պատճառը յայտնապէս արքունական ծառայութեան մտնելն եղած է, և ոչ թէ ինքն էլ կրօնաւորելու դիտում ունեցած է, որով Մարիամու կրօնաւորաց վանք բաշտիլը լոկ ապահով կենաց եղանակ պիտի նկատուի, և ոչ թէ երկուց կողմանց համերաշխ բարեպաշտութեամբ ամուսնական կեանքին վերջ տալու նպատակ: Գրիգորի այս բաժանումէն յետոյ ուր գնացած լինելը յիշուած չէ, այլ պարզապէս ասուած է թէ «անցեալ գնաց առ Տրդատ» (Խոր. և Գլակ.): Արդ՝ այս միջոցներուն, ըստ նոր հետազօտութեանց, Տրդատ արդէն կը թագաւորէր:

Վաղբրիանոս կայսեր գերութեան առթիւ 260-ին յիշուած է հայոց մի Արտաւազդ թագաւոր, անժանօթ տոհմային պատմչաց: Սորա վախճանը յայտնի չէ, այլ կերևի թէ Տրդատ նորա յաջորդը եղած է և թագաւորած մինչև 276, յորում Վառն Գարսից թագաւորը զբաւեց հայաստանը և Տրդատ պարտաւորուեցաւ ապաւինել Հռովմայեցւոց, և նոցա մօտ մնաց մինչև որ Դիսկղետիանոսի

օգնութեամբ դարձաւ իւր դահը 286 կամ 287-ին: Իսկ այս թուականը կը քաղեմք Խորենացոյ զննութենէն, որ դատած է և ստուգած «զլթազաւորին Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի» (Խոր. Բ. 82): Արդ՝ Դիոկղետիանոսը կայսր եղաւ 284-ին և նորա հրրորդ տարին ընկնում է 286-էն 287:

Ըստ պատմութեան, Գրիգոր իւր ամուսնէն մեկնելէն մինչև իւր չարչարանաց տարին Տրդատայ ծառայութեան մէջ մնաց, ուրեմն քսան տարի ծառայեց նորան: Տըրդատ մի տեղ կասէ Գրիգորի. «այսչափ ամբ են զի տեսի զքեզ» և ուրիշ անգամ կըսէ. «Աշխատեցար ընդ իս ի մանկութենէ վաստակովք» (Աղաթ. 46. 86), որ երկար ժամանակ մէկտեղ եղած լինելնին կը ցուցնէ:

Իսկ Գրիգորի ծառայութիւնը ոչ զինուորական եղած է և ոչ կառավարական, այլ պալատական սպասահարկութիւն իբրև ներքին սենեկապետ և մտերիմ պաշտօնեայ, և նաև իբրև քարտուղար և դպիր արքունական, որովհետև յիշեցինք արդէն թէ Գրիգորը հելլենական և ասորական դպրութեանց մէջ վարժ էր:

Գրիգորի քրիստոնէութիւնը պէտք չէր որ Տրդատայ անձանօթ մնացած լինէր, զի շննթադրուէր, թէ այսչափ երկար ատեն արտաքին ուրացութեան մէջ ապրէր Լուսաւորիչը: Արդէն քրիստոնէութիւնը արդիւք չէր արքունական ծառայութեան, քանի որ հալածանաց հրաման չկար, և քրիստոնեայք նոյն իսկ Հռովմայեցի կայսերաց պալատներուն մէջ կը ծառայէին: Անյայտ մնացածը Գրիգորի բուն ցեղն ու ծագումն էր, և պէտք է ասել թէ իբրև Կեսարացի սոսկական մի կը նկատուէր նա արքունեաց մէջ:

Հիմնուելով մինչև այժմ բացառուած ժամանակագրական կէտերու վրայ՝ պիտի ասեմք թէ Գրիգոր Կեսարիայէ ելնելով Հայաստանի մէջ մտաւ Տրդատայ ծառա-

յուլիան 268-ին, որ աւելի ևս յարմար է զործոց ընական կարգին, և այնտեղ մնաց մինչև 276, և անկէ ետքը իւր տիրոջ հետ վնաց հռովմայ կայսերութեան երկիրը, և այստեղ ևս տասը տարիի չափ միասին ապրելէ և իբրև հաւատարիմ պաշտօնեայ անոր ծառայելէն յետոյ, ի միասին եկաւ 286 կամ 287 ին, երբ Տրդատ Գիովղետիանոս կայսեր օգնութեամբ իւր իշխանութեան կը դառնար:

### 3. ՉԱՐՉԱՐԱՆՔ ԵՒ ՎԻՐԱՊ

Միևնոյն տարին, երբ Տրդատ իւր յաղթական մուտքը կը կատարէր և դեռ իւր մայրաքաղաքը չէր հասած, Եկեղեցաց գաւառի Երէզ աւանի մօտ Անահտական մեհանի մէջ ուղղի իւր յաղթութիւնը տօնախմբել, և կռավաշտական մեծ զոհեր և արարողութիւններ կարգադրուեցան ի պատիւ մեծ տիրամօր Հայոց: Արտասովոր հանդէսը արտակարգ զործերու առիթ տուաւ, և յաղթութեան ամբարտաւանութիւնը Տրդատայ սովորական խոհականութիւնն ևս կորցնել տուաւ. և իւր պալատականներէն նորա ևս որոնք իրենց քրիստոնէութեան պատճառով կռավաշտական ծառայութիւններէ ազատ կը մնային, հրաման ստացան այդ արտասովոր պաշտամանց մասնակցել: Հրաման հղաւ նաև Գրիգորի Անահիտի նուիրեալ պատկները և փունջերը տանել, զոր հարկաւ պիտի չկատարէր Գրիգոր իւր քրիստոնէութեան հակառակ գտնելով: այլ Տրդատ իւր սովորական ներողամտութիւնը չունէր այլ ևս: Բռնութիւն և հաւատք իրարու բաղխեցան, և այսպէս տեղի ունեցաւ Գրիգորի մարտիրոսական նահատակութիւնը: Լուսաւորչայ չարչարանաց տեղը կանուխէն վանք մը շինուած է, որ և ցարդ կը մնայ Չարչարանաց Ս. Լուսաւորիչ անուամբ, Երզնկա քաղաքէն դէպ հարաւ երկու ժամի չափ հեռու Մեղուցիկ գիւղի մօտ, լեռանց ստորոտը, գեղեցիկ դիրքի վրայ:

Հուսաւորչի տրուած չարչարանքները հետեւեալ կերպով կը պատմուին Ագաթանգեղոսի մէջ.

1. Ձեռքերը կապած, գայլ ի բերան, կոնակը աղի բեռ, կուրծքը գեղոց բարձր տեղէ վար կախեցին:
2. Մէկ ոտքէն կախելով աղբ ծխեցին և դալար բերրով ծեծեցին:
3. Ոտքերը կոճղներու մէջ ճզմեցին:
4. Ոտքին երկաթ բեռներ մխելով վաղեցրին:
5. Գլուխը կուփահար ծեծեցին:
6. Գլուխը մամուլի մէջ դնելով քիթէն բացախ և բորակ փչեցին:
7. Գլուխը մոխրով լեցուն պարկի մէջ կապեցին:
8. Գլխիվայր կախելով նստատեղէն ձագարով ջուր լցրին:
9. Գոգերը երկաթէ ճանկերով քերեցին:
10. Երկաթէ դաստակներու վրայ քաշկոտեցին:
11. Ծունկերը երկաթէ կապիճներու մէջ պնդելով կախեցին:
12. Հալած կապարով մարմինը այրեցին:

Այդ չարչարանքները երբեմն օրերով ևս շարունակեցին, այնպէս որ Գրիգորի վրայ փորձուած բռնութիւնները ամիսէ աւելի տևեցին. և այս միջոցին վերջն է, որ Գրիգորի իսկապէս ով լինելը զննութեանց նիւթ եղաւ և յայտնուեցաւ: Հուր տուողն եղաւ Տաճատ Աշոցեան քեռայրը Արտաւազգ Մանդակունւոյ, որ կրցած էր Գրիգորի հետ ծանօթութիւն ունեցած լինել Գեսարիոյ մէջ, զի և ինքն Մանդակունեաց կոտորածի ժամանակ Արտաւազգայ քոյրը փախցրած էր Գեսարիա և յետոյ իրեն կին առած (Խոր. Բ. 71. 82): Գրիգոր սերնդեամբ թագաւորազան Անակայ որդի, և քրիստոնէութեամբ թագաւորական հրամանաց ընդդիմացող դատապարտուեցաւ Արտաշատայ Խոր Վիրապը ձգուելու:

Լուսաւորչի Երզնկայէ Արտաշատ տարուելուն նկատմամբ ս. Թէոփորոս Սալահունիի պատմութեան մէջ կը յիշուի, թէ Սուրբնաշէն աւանէն անցուցին (այժմ Ղուլուն անուն փոքրիկ քրդարնակ գիւղ ի Գերզան), ճիշտ սուրբին քրիստոնէութիւն ընդունելու օրերը: Պարնեցիք ևս աւանդութեամբ կը պատմեն, թէ Պարնոյ մօտ Մուտուրկու Ս. Լուսաւորիչ վանքին տեղը մի գիշեր օթևա նեցաւ Լուսաւորիչը, և վիրապաձև փոքրիկ մի փոս էլ կը պատուուի ցարդ իբրև Լուսաւորչի արգելարան: Նրկատելով Երզնկայէ Արտաշատ ուղեգիծը և դատապարտեալները դղեակներու մէջ պահպանելու սովորութիւնը, կրնայ արդարանալ Պարնեցոց աւանդութիւնը: Այդ ամեն հղելութեանց իբրև թուական պէտք է ընդունել 286 կամ 287 տարին, յորում Գրիգոր արդէն 48 տարեկան հղած կլինի: Յայսմաւուրք փետրուարի 4 և 28 օրերուն կը դնեն չարչարանքն և վիրապ մտնելը, բայց թէ տոմարական հաշիւները ըստ հնոյն չեն, և թէ հեռաւորութիւնները լաւ ճշտուած չեն:

Լուսաւորչայ վիրապը ցայսօր կը ցուցուի և կը պատուուի Խորվիրապ վանքի մէջ Արտաշատայ բլուրի վրայ: Համակ քարաշէն և բոլորակ ձևով և իբր 4 մետր տրամագծով մի խոր հոր է վիրապը, որ առաջ աւելի խորունկ է եղեր, և յետոյ մասամբ լցուեր է հողով: Հորի բերանը այժմ ծածկուած է կամարով և վրան յատուկ մատուռ է շինուած պատարագի սեղանով, վանքին մեծ տաճարէն քիչ մի հեռու: Քսանուհինգ ոտք սանդխով կիջնուի մէջը, ուր մի քար կայ երկու մաշած տեղերով իբրև հեաք ծնրադրութեանց Լուսաւորչին:

Հին ժամանակի բանտեր խիստ և անտանելի էին և գեանափոր նկուղներ բանտի կը ծառայէին: Խորունկ և բերանը բաց հորեր էլ բանտի պէս կը գործածուէին, ինչպէս արևելեան յիշատակներէ կը քաղուի: Լուսաւորչի

վիրապն ևս այսպէս էր, և ըստ պատմութեան Արտաշատու դղեակին բանտն էր. և Գրիգոր ունեցաւ «զհամբարութիւն տևողութեան այնչափ ամս ի վիրապին» (Փարպ. 6.): Արտաշատու դղեակի բանտը ուրիշ դղեակներու բանտերէն աւելի խիստ էր և մեծ մահապարտներուն սահմանուած էր:

Հուսաւորչին վիրապի մէջ անցուցած ժամանակը դանազան յիշատակաց մէջ 13 կամ 14 և կամ 15 տարի ասուած է, և հարկաւ ամիսներու և օրերու ճշտութեամբ չենք կարող հաշուել զայն. այլ սովորաբար 287 տարին դնելով վիրապի մուտքը, վիրապի ելքը կը դնեմք 301-ին որ կանէ իբր 14 տարի:

Հուսաւորչին վիրապային կեանքը հրաշալեաց կարգն է. և նկատելով վիրապում ապրելու անյարմար պայմանները, և 14 տարիներու երկար տևողութիւնը, աստուածային սքանչելեաց մի յատուկ նշան կը նկատէ ազգը իւր Հուսաւորչին այնչափ ժամանակ կենդանի մնալը: Միւս կողմանէ պատմութիւնն ևս կընդունի Հուսաւորչի վրայ հսկող մարդկային մի ձեռք. վասն զի կայ մի կին, որ ամեն օր իրեն հաց կը բերէ: Վիրապէն ելնելուն պարագաները զննելով անհնարին է շտեսնել, որ ինքն թագաւորին քոյրն է՝ որ Հուսաւորչի խնամակալ եղած է, և Խոսրովիդիստոյ ծածուկ բրիստոնեայ եղած լինելը ստոյգ կը տեսնուի: Այլ աւելորդ է կամայական ենթադրութիւններով ջանալ նուազեցնել աստուածային զթութեան նշանակութիւնը, սը Հուսաւորչայ հաւատքին աշակերտեալ մի ազգի կրօնական խղճի հիմնաքարն եղած է:

Հուսաւորիչը վիրապի մէջ երկնային մխիթարութիւններ ևս ունեցած է: Մի հրեշտակ հանապազօրեայ այցելութիւններով զինքը կը մխիթարէ. և իրաւ էլ առանց երկնային քաջալիրութեան ներքին շնորհի անհնարին էր 14 տարի այդ խստամբեր կեանքին տոկալ: Մասնաւոր

աւանդութիւնն ևս ունիմք, զոր եկեղեցւոյ մէջ ևս կը յիշատակիմք: Օր մը հրեշտակը չերկիր միւս օր Լուսաւորիչը պատճառը կը հարցնէ. և հրեշտակը կը պատասխանէ թէ Քրիստոսի համարձման տօնի առթիւ հրեշտակաց ինն դասակարգութիւններ մի մի օր յատուկ հանդէս կը կատարեն յերկինս. և ինքը շորրորդ դասէն լինելով, շորրորդ օրը իւր դասուն հանդէսէն դատուիլ չէր կարողացած: Այդ յիշատակը կը կատարեմք համարձման կիրակիին, որ է երկրորդ ծաղկազարդի օրը, և շարականն ևս այդ յիշատակը կը բացատրէ: Հարկաւ այդ աւանդութեանց խորհրդական իմաստ պիտի տամք, և ոչ թէ հրկնքի գործերուն երկրային ձևեր պիտի ընծայեմք:

Վիրապի պատմութեան վրայ աւելի ասելիք չունիմք. միայն կարող եմք յիշատակել Տրդատայ հրովարտակաները քրիստոնէից դէմ, և նոցանով հրամայուած հարածանքները, և Ս. Թէոդորոս Սալահունիի նահատակութիւնը Դերջանում, ուր այժմ կայ Սըբըբը Ս. Թորոս վանքը, և եկեղեցւոյ մէջ կը ցոյց տրուին նոյն Ս. Թէոդորոսի, և իւր մօր Ս. Ազարիթայի, և զինքն մկրտող Ս. Տառնոս քահանայի գերեզմանները: Այդ միջոցին զանազան պատերազմներ ևս եղան Հռովմայեցւոց և Պարսից մէջ, որոց մասնակից էր Տրդատ իբրև նիզակակից Հռովմայեցւոց, մանաւանդ որ պատերազմի դաշտն ևս Հայոց երկրին մէջ էր. բայց սորա մեր նպատակին չեն պատկաներ:

#### 4. Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆԷ

Լուսաւորչայ վիրապի կենաց վերջին տարւոյն մէջ տեղի ունեցաւ Հռիփսիմեանց նահատակութիւնը: Խորհնացւոյ և Ազաթանգեղոսի պատմութիւններէ կը բաղեմք թէ Հռովմայ մէջ Ս. Պողոսի մի կուսաստան կար, որի

պլսաւորն էր Քայիանէ թագաւորական ցեղէն, և նոյն  
 վանքի կուսաններէն մինն էր Հռիփսիմէ նոյնպէս թա-  
 գաւորական ցեղէ և աննման կերպով գեղեցիկ, Խորենա-  
 ցի կը պատմէ թէ Քայիանէ «իմացեալ հոգւոյ աւամբ»,  
 թէ Հռիփսիմէի համար կը խորհուի «առնուլ ի պատիւ  
 տանն Հռովմայեցւոց ի թագուհու թիւն», «առեալ զնա  
 փախչի յԵփեսոս»: Իսկ Ագաթանգեղոս կը պատմէ թէ  
 խուզարկու նկարիչներ զրկուեցան ամէն կողմ գեղեցիկ  
 աղջիկներ փնտռելու, բռնութեամբ մտան Ս. Պօղոսի  
 վանքն ևս, նկարեցին Հռիփսիմէին, ցոյց տուին Դիոկղե-  
 տիանոսի, անմիջապէս հարսանեաց պատրաստութիւնք  
 սկսան, կուսանք պահոց և աղօթից դիմեցին. և երբ  
 վտանգը մօտալուտ տեսան, որոշեցին փախչել, և անմի-  
 ջապէս կը յարէ, թէ «գային հասանէին յերկիրն Հայոց  
 յԱյրարատ գաւառ» (Ագաթ. 118): Դիոկղետիանոս եղելու-  
 թիւնը կը զեկուցանէ Տրդատին յատուկ հրովարտակով և  
 հրաման կանէ Հռիփսիմէն գտնել, իրեն յղելու կամ ան-  
 ձին պահելու ազատութեամբ: Հռիփսիմէ և Քայիանէ ըն-  
 կերներով կը գտնուին Վաղարշապատում ի Հնձանս թա-  
 գաւորին:

Ըստ միւս պատմութեան որ յանուն Խորենացւոյն,  
 Քայիանէ և Հռիփսիմէ հետգհետէ կը հանդիպին յԱղեք-  
 անդրիա Եփեսոսի, անկէ յԵրուսաղէմ, և անտի յԵդե-  
 սիա: Այստեղ կասուի թէ Հռովմէ փախչողներ եօթանա-  
 սունէ աւելի էին, որք հետգհետէ ցրուեցան Եդեսիա,  
 Գարանաղի և ի տեղիս տեղիս: Քայիանէ և Հռիփսիմէ և  
 ընկերներէն մի մաս Միջագետքէն կը մտնեն ի Հայս և  
 կհանդիպին Խլաթ ի Բզնունիս (այժմ Ախլաթ), Սուրբ  
 Խաչ (այժմ Խաչգիւղ) և Գճաւ ի Մոկս, Գորդուաց երկ-  
 րի մէջ Բերկրացոց գաւառ, Տմորիք, Մշկունիք, Բուժու-  
 նիք և Սուրբտիկին, Ագռաւաքար և Գատկեր Տիրամօր  
 (որ է Հոգւոց վանք) և Բոյթ Անձևացեաց մէջ, Կորիթ

և Վարազ ի Վասսուրական: Վարազայ Ուրբաթայրքի մէջ կը մնան երկար ժամանակ, ուր քահանաներ ևս կը յիշուին. և վերջապէս կանցնին Վաղարշապատ, ուր Ազաթանգեղոսի պատմութիւնը. հասցրած էր իրենց Հռովմէ մեկնելէ անմիջապէս յետոյ:

Այդ պատմութիւններն այնպիսի պարագաներ ունին, որով հաւանականութենէ հեռու կը մնան: Եւ նախ այսպիսի նշանաւոր դիպուած մի անծանօթ է բոլորովին արևմտեան պատմութեանց և վկայաբանութեանց. կանանց բազմաթիւ մի խումբ Հռովմէ մինչև Վաղարշապատ անկասկած կը ճանապարհորդէ հալածանաց ժամանակ. երկու կուսակցաց անուններն ևս բնաւ արևմտեան լեզուաց մէջ չեն գտնուիր, Գիողեթիանոսի պատմութեան ծանօթ և ստոյգ պարագայք բնաւ չեն համաձայներ. և այլ նմանօրինակ տեսութիւնք:

Արտարին պատմութիւնք կը յիշեն Գիողեթիանոսի Պրիսկա կինը և Վաղերիա աղջիկը, որոնք քրիստոնէութեան համար հալածուեցան և նահատակուեցան, ուստի ոմանք ուղեցին սոցա նոյնացնել մեր Գայիանէի և Հռիփսիմէի հետ, սակայն նորա նահատակուած են Թեսագոնիկէ (այժմ Սելանիկ), զոր չէ հնար Վաղարշապատի հետ նոյնացնել:

Այլը խորհեցան թէ Միջագետացի կուսաններ լինին, որոնք Ս. Փերրոնեայ վկայաբանութեան համեմատ Մծրինէ փախչելով ամէն կողմ ցրուեցան: Այդ մեկնութեան համար Հռիփսիմեանց վերագրուած ուղեգրիծը կը յարմարի, այլ պատմական նշաններ կը պակսին:

Վերջապէս, ըստ այլոց, նոյն իսկ Հայ կուսաններու մի խումբ են Հայոց մայր կուսաստանէն՝ Հոգևոց վանքէն ելած և Այրարատայ կողմերը հաստատուած: Հռիփսիմեանց ուղեգրիծը սորան ևս կը յարմարի, այլ ազգային ականդութեան մասը, որ Հռիփսիմեանները օտարագրել-

Ներ կը ճանաչէ, չհաստատուիր: Այսու հանդերձ թերևս աւելի պատուաւոր կը լինի քնիկներու և հայուհիներու ընծայել չայոց լուսաւորութեան պատմութեանէն մի փառաւոր էջ:

Բնչափ ևս խիստ քննադատութիւնը կամենայ Հռիփսիմիանց պատմութեան շուրջը դժուարութիւններ կուտել, և նորա ինչ ինչ կողմերը պատմական պահանջից անհամաձայն պտնել, այս միայն Հռիփսիմեանց ծագման կէտը կը շօշափէ, որ պատմութեան պատահական մի պարագայն է: Իսկ ինչ որ պատմութեան իսկական կարևորութիւնը կը կազմէ, է նոյն ինքն վկայութիւնը և Հայոց լուսաւորութեան համար նշանակութիւնը, որ ամեն քննադատութենէ վեր պատմական ստուգութիւն կը վայելէ: Երեք վկայարաններ, որոնք էջմիածնայ շուրջը կը բարձրանան, և որոց հիմնարկութիւնք և նորոգութիւնք և յիշատակք Լուսաւորչայ դարուն հետ կը կապուին, անստեղծ փաստեր են թէ Գայիանէ և Հռիփսիմէ իրենց ընկերներով չորրորդ դարու սկիզբը նահատակուեցան այդ տեղ. և Հայոց ընդհանուր և համարձակ և հաստատուն քրիստոնէութեան դուռ բացին: Անցնինք ուրեմն նահատակութեան պարագայից:

Հռիփսիմեանք կը յայտնուին ի Վաղարշապատ արքունական Հնձանի կողմերը: Տրդատ կուզէ Հռիփսիմէի վրայ իւր անյազ ցանկութիւնը յադեցնել և կոյսը արքունիք կը բերուի: Գայիանէ կը քաջաւերէ Հռիփսիմէի ընդդիմադրութիւնը, որ ամենայն ուժգնութեամբ կը մերժէ սէք արքայն, և անհամեմատ մրցումի մէջ յալթական և անվնաս կելնէ արքունիքէն: Գահիճներ կը զրկուին ետեւէն, որոնք չորս ցիցերու պրկելով, լեզուն կտրելով, մարմինը այրելով, գոգը պատռելով, աչքերը փորելով և անդամները յօշոտելով կտտամահ կը սպանեն Երանե ի Գոյսը. և նոյն միջոցին կը նահատակուին սրով Հռիփսիմէի ընկերներէն երեսուններկու կոյսեր ևս:

Միւս օրը կը նահատակուին Գայիանէ և ուրիշ երկու երիցագոյն կոյսեր Հռիփսիմէի նման տանջանքներով: Մի ուրիշ կոյս ևս որ Հնձանի ապաստարանին մէջ հիւանդ մնացիր էր սրով կը նահատակուի, և այսպէս կը լրանայ Ս. Հռիփսիմեան և Ս. Գայիանեան 37 վկայուհիներու թիւը, որոց մարմինները կը թողուին անթաղ և բացօթեայ իրենց նահատակութեան տեղերը, որք ճշտիւ կը պատասխանեն այժմեան Ս. Հռիփսիմէ և Ս. Գայիանէ և Ս. Ըողակաթ տաճարներուն:

Նահատակութեանց օրերը եղած են Հոռի 26 և 27, որք նոյնպէս նշանակուած են յայսմաւուրբին մէջ, և հաստատուն տոմարով կը պատասխանեն հոկտեմբերի 5 և 6 օրերուն: Սակայն հաստատուն տոմար շկար այն դարում, և շարժական տոմարով պէտք է հաշուել օրերը, և նահատակութեան տարին: Քրիստոսի 301 թուականին Հոռի 26 և 27 օրերը պատասխանած են նոյեմբերի 6 և 7 օրերուն:

##### 5. ԵԼՆ Ի ՎԻՐԱՊԷՆ

Հռիփսիմեանց նահատակութեան և Գրիգորի վերապէն ելնելուն միջոցը միայն ինն օր է: Տրդատ վեց օր մեկամաղձոտ տխրութեան մէջ ընկղմած կը մնայ (Ագաթ. 159), ի վերջոյ որսի կեղնէ, և նոյն օր վրան մի այլայլութիւն կուգայ, որ *խոզակերպ* լինելով բացատրուած է:

Լիւկանթըրոպչիս կամ գայլաթտութիւն կոչուած հիւանդութիւնը ծանօթ է, և այս բաւական է Տրդատայ հարուածը բացատրելու, մէկզի թողնելով այն քերթողական և վիպական զարգերը, որովք Տրդատայ վիճակը մանրամասնօրէն կը նկարագրուի, և թէ ներքին և թէ արտաքին նկարագիրը խոզի կերսլարանքին կը վերածուի: Հարուածը Տրդատէն դատ իւր աբքունեաց և իւր աւա-

զանւոյն վրայ ևս կը տարածուէր (Ազաթ. 161), թէ-  
պէտ սոցա վրայ մանրամասնութիւնք շնն պատմուիր:  
Բայց այդ վիճակը շատ քիչ տեսցց: Խոսրովիդուխտ ար-  
քայաքայրը, որ հարուածներէն ազատ մնացած էր, (այս  
ևս դարձեալ իւր քրիստոնէութեան նշանակ է), մի  
տեսիլք տեսաւ Գրիգորի նկատմամբ, և տեսիլքը հինգ-  
կննաց (Ազաթ. 162), որ բնականաբար հինգ օրեր պէտք  
է նշանակէ. սակայն պատմութիւնը կասէ թէ Գրիգորի  
Վաղարշապատ հասած օրը ինն դիշեր էր որ կուսանաց  
մարմիններ անթաղ մնացած էին (Ազաթ. 166):

Հին յայտաւուրքը վիրապէն ելնելու յիշատակը կը  
դնէ Սահմի 10-ին, և այսպէս 13 օր կը հեռացնէ Գա-  
յիանեանց կատարումէ, և այս 4 օրերու տարբերութիւնը  
պէտք է իրեն հիմ ունենայ Խոսրովիդուխտ տեսիլքի  
հինգվինը, այլ ապահովագոյն կերևի մեզ ինն օրերու ո-  
րոշ յիշատակութիւնը: Եթէ ելքը դնենք Սահմի 6-ին, և  
թուականը կը լինի 301 նոյեմբեր 16, իսկ եթէ դնենք  
Սահմի 10-ին, թուականը կը լինի 301 նոյեմբեր 20, միշտ  
շարժական տոմարի հաշիւը պինդ բռնելով: Այստեղ զանց  
կընեմք մանրամասնաբար պատմել Գրիգորի վիրապէն  
ելնելը, ծանօթ պատմութիւն լինելուն և բնաւ դժուա-  
րութեանց տեղի շտալու համար:

Գրիգոր հրաշքով իմն իւր կենդանաթաղ գերեզմանէն  
ազատուած և Խոսրովիդուխտ խնամակալ Օտա Ամատու-  
նիէն առաջնորդեալ յաղթական հանդիսով կուգայ Երտա-  
շատէն Վաղարշապատ, և ամիջապէս կըսկսի ժողովուրդը  
աւետարանել և հնգօրեայ շարունակեալ անսուաղ պահօք  
կը պատրաստէ հարուածեալները և բոլոր ժողովուրդը  
բժշկութիւն և լուսաւորութիւն ընդունելու (Գլակ. 23):  
Այս պահք տարեկան յիշատակ և հաստատուն մի աւան-  
դութիւն դարձած է բոլոր ազգի համար, և այս է Առա-  
ջաւորաց պահոց ծագումը (Ընդհ. 105): Առաջաւորաց

հինգերորդ օրը Նինուէացւոց ապաշխարութեան յիշատակն ունիմք, զի նոյն ինքը Լուսաւորիչը Նինուէացւոց ապաշխարութեան նմանողութեամբ հրամայեց այդ առաջին պահքը:

Ազաթանգեղոսի պատմութիւնը հարուածելոց բրժշկութիւնը կը յապաղէ մինչև 66 օր (Ազաթ. 544), սակայն լաւագոյն օրինակը Գլակայ 5 օր ետքը եղած կըսեն, և նոյնպէս կը կրկնէ Չնորհալին յազգային աւանդութենէ: Հետևաբար հնգօրեայ առաջին անսուղ պահքէն ետքը բժշկութիւնը կատարուելով հանդերձ, ապաշխարութեան միջոցը շարունակեց այլ ևս 60 օր. յորս Լուսաւորիչը կատարեց իւր քարոզութիւնները՝ ուսուցանելով արքունեաց և աւագանւոյն և Վաղարշապատու ժողովրդեան և շրջականերէ եկողներու աւետարանական վարդապետութիւնը: Բնական էր, որ այդ միջոցին հարուածեալք կամ բժշկեալք տակաւին իրենց անյարդար և ապաշխարող կերպարանը պահէին:

Սյդ օրերուն հաշիւը վերև կազմուած օրագրութեան կցելով կը գտնեմք թէ վիրապէ ելնելէն Վաղարշապատ դալը 1 օր, և հինգ ևս պահոց օրերը հաշուելով կը հանեմք սահմի 16, որ է նոյեմբեր 26. Իսկ անկէ 60 օր ևս համընդ կը հասնեմք քաղոցի 16-ին, որ է 25 յունվարի 302 թուականին Քրիստոսի, և այս է ճշդիւ Լուսաւորչի տեսիլքի թուականը: Իսկ յայսմաւուրք տեսիլքի յիշատակը կը դնէ քաղոցի 10-ին միայն, 60 օր հեռաւորութեամբ սահմի 10 օրէն, և միանգամայն կը պատմէ թէ հարուածեալները բժշկուեցան 30 օր յետոյ, որ կը լինի արէ 10, և թէ 35 օր ևս ապաշխարութիւնը և քարոզութիւնը շարունակեցին, որով դարձեալ կը հասնեմք քաղոցի 15 կամ 16 ըստ վերնոյն: Միայն թէ յայսմաւուրքը կը սխալի երբ բոլոր թուականները հաստատուն տոմարով կը վերածէ և քաղոցի 10 օրին դիմաց



կը դնէ դեկտեմբեր 18, մինչ պէտք է բոլոր թուականները հաշուել շարժական տոմարով, որով կը վարուէին Հայերը չորրորդ դարու սկիզբը:

#### 6. ԷՋՄԻԱՏԻՆ

Լուսաւորչի տեսիլքը կը կոչուի Էջմիածին՝ որովհետեւ տեսաւ թէ Քրիստոս Հօր Միածին էջ յերկնից, կը կոչուի ևս Չոզակած՝ որովհետեւ տեսաւ թէ Լուսոյ շող կածեց երկնքից: Տեսիլքներու պատմութիւններ միայն և միայն տեսանողի վկայութեամբ կարող են հաստատուիլ, և աւելորդ կը դատեմք Լուսաւորչի տեսիլքի վաւերականութեան վրայ վիճաբանել: Լուսաւորչի անձնաւորութիւնը, ազգային աւանդութիւնը, նոյն ինքն Էջմիածնի տաճարը և Էջմիածնի աթոռը, որ է հիմն և մայր ամեն հայ եկեղեցեաց և նոյն ինքն Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ անկեան քարը, մեծամեծ երաշխաւորութիւններ են, թէ երկնային մի տեսիլք առաջնորդեց մեր Լուսաւորչին:

Տեսիլքի նկարագրութեան և Էջմիածնի կաթողիկէի ձևի մէջ դիտուած ինչ ինչ նմանութիւններ, ոմանց համար կը ծառայեն իբրև փաստ թէ տեսիլքը ձևակերպուեցաւ արդէն շինուած տաճարի վրայ. սակայն պատմութիւնը դիտել կուտայ թէ Լուսաւորիչը շինութեան ատեն ուզեց հետեւել տեսած ձևերուն: Միւս կողմանէ կարծուած նմանութիւնը շատ անկատար է, և ստոյգ էլ չէ թէ Լուսաւորչի շինած կաթողիկէն ճշտիւ այժմեան ձևով եղած լինի:

Տեսիլքի առաջին մասն է երկնից բացուիլը և լոյս երևիլը: Լուսոյ մէջէն Միածինը կիջնէ լուսաւոր և մարդկային կերպարանքով և ոսկի ուռամբ կը բազխէ բաղաբի մէջ տեղը արքունեաց մօտ և կը դրդեցնէ Սանդարամետը: Էջմիածնի վանքի մեծ դուռը Տրդատայ

դուռ կը կոչուի մինչև ցայսօր, և Տրդատայ արքունեաց յիշատակը կը դարձուցանէ. իսկ տաճարի տեղը Սանդարամի Աստուծոյն տեղն եղած կասուի և մինչև այսօր տաճարի ներքև դատարկ լինելը կը վիտցուի և կը հնչէ ևս, թէպէտ գննութիւն եղած չէ: Այս է Միածնի իջումը, որի ճիշտ կէտը տաճարի մէջտեղի Իջման խորանն է. և որի համար կասուի թէ իսկզբան լոկ բոլորակ մի քար կար եկեղեցւոյ մէջ տեղ, և տասնհեօթերորդ դարու վերջերը խորան շինուեցաւ վրան:

Տեսիլքի միւս մասը կաթողիկէի նկարագրութիւնն է: Պալատի մօտ ճախարակեայ և բլուրի չափ մեծ մի պարիսպ, նորա վրայ հրեղէն մի սիւն յոյժ բարձր, սիւնի վրայ ամպէ թակաղակ կամ խոյակ և վրան լուսեղէն խաչ: Նոյն կերպով և ձևով ուրիշ երեք սիւներ ևս Քայիանեանց վկայութեան տեղը, Հռիփսիմեանց վկայութեան տեղը և արքունի Հնձանի տեղը, բայց այս երեքը աւելի ցած, դի խաչով մէկտեղ առաջինի թակաղակին կը հասնէին: Խաչերու վրայէն կամարներ մէկէն մէկալը և կամարներու վրայ խորանարդ դմբէթ, գմբէթի վրայ Աթոռ Աստուծոյ, և սորա վրայ դարձեալ խաչ: Արդ՝ այս նկարագիրը շատ հեռու է Էջմիածնայ նմանութենէն: Մերկ սիւներ դաշտի վրայ, մէկ սիւնը երեքէն բարձր, կամարներ խաչերու վրայէն, գմբէթը խորանարդ, և ոչ միայն Էջմիածնի տաճարին չեն նմաներ, այլ և ունէ կանոնաւոր շէնքի գաղափար չեն տար: Իսկ եթէ Էջմիածինը ևս սիւն ու կամար ու գմբէթ ունի, ուրեմն ամեն տաճար նոյն ձևն ունի, և Լուսաւորիչն ևս տաճարի ձևը զիտեցած պէտք է լինէր Պեսարիայէ և ուրիշ պտտած տեղերէ: Աւելի յարմար է ասել թէ Լուսաւորիչը ոչ թէ տաճարի նկարագիրը, այլ չորս տաճարներու խորհուրդը կը բացատրէ, ինչպէս ինքն ևս յայտնի խօսքերով ասած է:

Տեսիլքը ուրիշ մասեր ևս ունի: Լուսաւորիչ կը տես-

նէ բոլոր դաշտը միասին սեղաններով լեցուն, իւրաքանչիւրի վրայ մի մի լսաչ։ Գը տեսնէ խորհրդաւոր մի դետ, որտեղից սև այծեր կանցնեն և ճերմակ ոչխար կը դառնան, լուսակէզ գառեր կը ծնեն, գառերէն ոմանք գայլ կը լինին, և այլը կը թևաւորուին և երկինք կը բարձրանան. իսկ գայլերը հրեղէն հեղեղի զօրութեամբ կանհետանան։ Տեսիլքի այս մասը Հայոց եկեղեցւոյն կը պատկանի ըստ մեկնութեան նոյն իսկ Լուսաւորչի։ Այլ եթէ տակաւին ուզուի գիտողութիւն ընել, թէ մի գուցէ տեսիլքը եղելութեան վրայ ձևուած լինի, մէք մատենագրական խնդիրներու չմտնելով կը յիշեցնեմք միայն, թէ Լուսաւորչի տեսիլքը յատուկ պարագաներ չունի, և իւր ամբողջութեամբ կրնայ պատշաճիլ բոլոր եկեղեցիներու վրայ ճշմարտուած ընթացքին։

#### 7. ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Միածնի իջման տեսիլքով, որի թուականը ճշտեցինք ի 25 յունուար 302, կը փակուի ապաշխարութեան միջոցը, որուն 66 օրերը կը յիշեցնեն առաջաւորէն գատիկ եղող միջոցի տասն շաբաթները։ Անկէ ետքը կը սկսի լուսաւորութեան գործը, թագաւորն ու թագուհին և արքունեաց աւագանին և նախարարներ իրենց բանակներով կը հաւատան Քրիստոսի, և Տրդատ հրաման կը հանէ որ քրիստոնէից դէմ հալածանքը դադարի և ժողովուրդը համարձակ պաշտէ Քրիստոսի սուրբ հաւատքը։

Լուսաւորչի առաջին գործերէն մին կը լինի երեք վկայարաններ կանգնել տեսիլքի վերջին երեք սիւներուն՝ կամ որ նոյն է կուսանաց նահատակութեան երեք տեղերուն վրայ, որք յետոյ կատարեալ և խորաններ ունեցող տաճարներ կը լինին, և իւրաքանչիւրի ներքև կամփոփուին կուսանաց մարմիններ, որք կամ կանու-

խէն սնտուկներու մէջ փակուած էին, կամ թէ ուրիշ նախահոգ զգուշութեամբ և պատուով պահուած էին մինչև այն ատեն: Յիշեալ երեք տաճարները ցարդ կը մնան, թէպէտ Լուսաւորչայ շինածները փոփոխուած են: Այժմնան Ս. Հռիփսիմէի տաճարը Գոմիտաս կաթողիկոսի շինածն է. (Է. դար). Ս. Գայիանէի տաճարը Եզր կաթողիկոսի շինածն է, (Է. դար), իսկ Ս. Շողակաթը նահապետ կաթողիկոսէ շինուած է (ԺԷ դար): Խորաններու ներքև գետնափորներ կան մեծամեծ քարերով ծածկուած, և անոց մէջ են կուսանաց նշխարները, որք և տեսնուեցան վերջին անգամ Փիլիպպոս կաթողիկոսի օրով (ԺԷ դար) մասնաւոր նորոգութեանց առթիւ, ըստ պատմելոյ Դաւրիժեցոյն (Առաք. 251. 252): Միայն Շողակաթի մէջ հանգչող կուսին տապանն ու տապանաքարը կը մնայ ցարդ ի բացի, իսկ սուրբի անունը տեղացիք սովոր են Մարիանէ Գոյս անուանել:

Պէտք էր տեսիլքի մեծ սիւնի տեղն ևս խորան և տաճար կառուցանել, այլ զայդ առ այժմ կը յետաձգէ Լուսաւորիչը մինչև եկեղեցւոյն մեծ հովիւ տրուի: Կը յիշեցնեմք թէ մեհեանի տեղ էր այն, և նահատակութեան տեղ չէր եղած, ուստի վկայարան շինուելու յարմար չէր, այլ քաղաքորմով պատեալ կը թողուէր այնպէս, միայն մի խաչ աւելցնելով վրան:

Վկայարանաց շինութեան կը հետևին բազմներու կործանումներ: Վաղարշապատու մեհեաններ հարկաւ անմիջապէս քակուած էին, երբ կը յիշատակուին կործանուածները կարգաւ՝ Տիրի մեհեանը Մեծամօրի մօտ, Անահիտինը Արտաշատ, Բարիշիմնայն Թորդան, Արամազդինը Հանի, Անահտականը Երէզ, Նանէականը Թիլ և Արամազդայն Բագայառիջ: Սորա երկու մասնաւոր կեդրոններ կը կազմեն, առաջինն Արարատայ դաշտը և երկրորդը Եկեղեաց գաւառը իւր շրջականերով, (այժմ Եր-

զնկա և Գերջան և Գամախ), և այդ յիշատակութեանց մէջ բնաւ հարաւային կողմանց Տարոնայ և Վասպուրականի անուններ չեն տրուիր:

Գործոց ընթացքը քննելով և պատմական պարապանքը կշռելով մի նշանաւոր իրողութեան դիմաց կը գրտնուինք, այն է յեղակարծ և ընդհանուր մի փոփոխութիւն Հայոց ամբողջ ազգի վրայ, որ մինչ Հռիփսիմեանց նահատակութեան օրը ամբողջ հեթանոս և կռապաշտ կերեւար, քանի մի օր ետքը բովանդակ հաւատացեալ և քրիստոնեայ եղած կը տեսնուի, մինչ մի երկրի դարձը և իւր կրօնքը փոխելը երկարատեւ և շարունակեալ գործողութիւն պէտք է լինէր: Լուսաւորչի վիրապէն ելնելէն քիչ օր ետքը արդէն քրիստոնէութիւնը տիրող կրօնքն է դարձած բոլոր Հայերուն համար: Արդ՝ այս փոփոխութիւնը կը կատարուի, թէպէտև Գրիգոր՝ միակ քարոզիչն այդ կրօնքին անձամբ ամեն կողմ շերթար և երթալ իսկ չէր կարող, և ոչ իսկ ընկերներ կամ աշակերտներ կը ուփռէ զանազան կողմեր, որոնք չկան իսկ: Գրիգորի բոլոր ազդեցութիւնը արքունեաց վրայ է. և արքունեաց վրայ տարած յաջողութիւնը ընդհանրական արդիւնք կունենայ: Որովհետեւ քրիստոնէութիւնը նոր չէ երկրին մէջ. քրիստոնեաներ բաւական բազմութեամբ կան ամեն կողմեր, հալածանքն ու ճնշումը նոցա հրապարակի վրայ ազդեցութիւնը կը ծածկէ, և հալածանաց դադարման արքունի հրովարտակը կը բաւէ որպէս զի մէջտեղ ելնեն և ազդեցութիւննին անարգել գործածեն, և ահա ամեն կողմ քրիստոնէութիւնը տիրող կրօնք կը դառնայ և բոլոր երկիրը քրիստոնեայ կերելի: Ասկէ զատ ոեւ է մեկնութիւն չբաւեր ճշտութեամբ բացատրել այդ սքանչելի եղելութիւնը:

Ստոյգ է, որ տեղ տեղ հեթանոսական ոյժեր կը մնան, դեւեր դէպի հիւսիս կը փախչին. որ ասել է թէ

հեթանոսութիւնը հիւսիսային լեռնագաւառներ կապաւի-  
նի. և հարաւային գաւառներու մէջ, ինչպէս պիտի տես-  
նեմք, քուրմեր պատերազմներու իսկ կը ձեռնարկեն, սա-  
կայն այդ ամենը ցրիւ և մասնաւոր դէպքեր են, որոնք  
մանաւանդ մեր կարծիքը կը հաստատեն, թէ ժողովուր-  
դի բրիստոնէութիւնը կը տարածուի բնական բեր-  
մամբ. մինչ միւս կողմանէ քուրմերու իշխանութիւնը կը դ-  
ղիացեալ կամրանան իրենց կեդրոններու մէջ. մինչեւ որ  
եկեղեցական և քաղաքական իշխանութեանց միացեալ  
գորութիւնը իրենց դէմ ելնէ: Հետեւապէս մի անգամ եւս  
կը հաստատուի, թէ բրիստոնէութիւնը առաջին երեք դա-  
րերու մէջ Հայաստանէն ջնջուած չէր, և հպարտանաց  
դադարմամբ համարձակութիւն գտնելը բաւական եղաւ որ  
բոլոր երկիրը մէկէն ի մէկ բրիստոնէական լուսով լուսա-  
փայլեալ լուսադարձուի, և որովհետեւ այդ լուսաւորու-  
թեան բուն պատճառը Գրիգորն էր, իրաւամբ էլ ազգը  
ԼՈՒՍԱԻՈՐԻՉ անունով փաւաւորեց նորան:

Ուրիշ դիտելու մի կէտ ևս եկեղեցական պաշտօնէից  
բացակայութիւնն է, եկեղեցական մի ամենակարեւոր ի-  
րողութեան մէջ: Սակայն հարկաւ Հայաստանի մէջ եկե-  
ղեցականներ բոլորովին չէին պակօք. Ս. Թէոդորոս  
Սալահանույ պատմութեան մէջ կայ Ս. Տասիոս բահա-  
նայն. Ս. Հռիփսիմեան պատմութեանց մէջ կան Ուր-  
բաթայրի քահանաները. Արտագու և Սիւնեաց աթոռ-  
ների հարկաւ առանց պաշտօնէի չէին, թէպէտ և Ս. Մեհ-  
րուժան հայրապետին անունէն հտքը ուրիշ ծանօթ ա-  
նուն չունինք: Վիրապի կենդանաթաղ մարտիրոսին հրա-  
շալի ազատութիւնը, Տրդատայ յեղակարծ ախտին սրանչե-  
լի բժշկութիւնը, ու բրիստոնէութեան այդ պարագայից  
մէջ ստացած փայլն ու ազդեցութիւնը, այնպէս գրաւե-  
ցին արքունիքը, որ նա ինքը դարձաւ մի գործիչ Հայ  
բրիստոնէութեան, և ինքն ստանձնեց առաքելութեան

մեծ պաշտօնը, ինքը գրեթէ ձեակերպեց այդ կրօնական ձեռնարկը, և քրիստոնէութեան մնացորդաց զործակցութիւնը ուղղակի չփնտուեց: Չատերը մեր քրիստոնէութեան չորրորդ դարու պատմութիւնը դնելով, հայ քրիստոնէութիւնը կը դատափետնէ և նորա մէջ հեթանոսական հետքեր և խառնուրդներ կը գտնեն: Բայց այս խոյ կը կազմէ հայ քրիստոնէութեան ինքնատիպ նկարագիրը: Հայ քրիստոնէութիւնը կաղմակերպողներն՝ արդէն եկեղեցակա՜նութեան մէջ վարժ և քարոզութեան ու տարածման պատրաստութեամբ եկած պաշտօնէից խումբ չեն, ինչպէս եղած են ուրիշ տեղեր, որպէս զի արդէն կաղմակերպեալ մի ձև տեղափոխելու աշխատին, և իրենց վարժութեամբ ստացած ձևերը և ծէսերը և սովորոյթները տարածեն: Այլ եկեղեցական պաշտօնէութենէ օտար մի Քրիզոր որ Քրիստոսի հաւատքը ունի միայն, և Քրիստոսի հաւատքի ոյժը անձին վրայ փորձող մի Տրդատ, ներքին համոզման բուռն զօրութեամբ հաւատքը կը տարածեն միայն, առանց ձևի ծէսի, և հետևապէս հեթանոսական սովորութիւններ կը մնան, կրօնական, ամուսնական, ընտանեկան, և այլ շատ կէտեր իրենց ամբողջ նախկին ձևով կը քրիստոնէանան, և հետևաբար շատ բնական է, որ քրիստոնէութեան ներքև հեթանոսութեան հետքեր տիրեն, և Հայ քրիստոնէութիւնը, արդէն քրիստոնէութեամբ կաղմակերպեալ ազգաց ձևերէն տարբերութիւններ ունենայ:

#### 8. ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ազգը քրիստոնեայ եղած էր, երբ դեռ իրեն հոգեւորական պետ չունէր ըստ քրիստոնէական նուիրապետութեան, թէպէտ ունէր մի գլուխ ըստ հաւատոյ զօրութեան: Տրդատ թագաւորը աշխահախումբ ժողովով աւագանւոյն (Ագաթ. 593) Քրիզորի իրաւունքը կը հռչակէ,

և ձեռնադրութիւն ընդունելու համար իշխանավայել հանդիսով Գրիգոր կը տարուի Գեսարիա, և ձեռնադրութիւնը կընդունի Պոնտոսի եքսարքոսէ, այսինքն է Գեսարիոյ Ղեւոնդիոս արքեպիսկոպոսէն (Ագաթ. 600):

Գրիգորի Գեսարիա երթալուն կարող էմք տալ զանազան համոզողական պատճառներ, որոնց մին է Գրիգորի գրեթէ կեսարացի լինելը. զի թէպէտ հեթանոս ծնաւ ի Հայաստան, այլ հեթանոսութեան կեանք չունեցաւ և գրեթէ խանձարրապատ Գեսարիա փոխադրուելով այնտեղ սնաւ և կրթուեցաւ և ապրեցաւ իբրև քրիստոնեայ, ամուսնացաւ և տան և զաւակաց տէր եղաւ, և ինրզինքը Գեսարիոյ ժողովուրդ ճանչցաւ, և հարկաւ կը փափագէր իւր եկեղեցականութիւնն ևս այնտեղէն ստանալ:

Միւս կողմէն Տրդատայ մտաց ևս համաձայն էր, չնովմայեցւոց ծանօթացնել զինքն և փառաւոր կերպով կատարել տալ ձեռնադրութիւնը, ինչպէս որ թագաւորակերպ ուղևորութեան հանդերձանքներն ևս կը վկայեն: Գեսարիա ոչ միայն եքսարքական մեծ աթոռ էր, այլ և Հայոց համար բոլորովին օտար երկիր չէր, և առաջին Հալք կը համարուէր, թէպէտ նոյն միջոցին չնովմայեցւոց զաւառ եղած, ինչպէս եղած էին մէկ միջոց նոյն իսկ Մեծ Հայոց նահանգները առանց իրենց բնագաւառութեան կերպարանը կորսնցնելու: Եկեղեցական առմամբ ևս Գեսարիա՝ Հայոց առաքելոյն Թադէոսի հաստատած աթոռներէն մին էր և Հալք իրենց առաքելոյն շնորհաբաշխութիւնը տաժած կը սեպուէին:

Միւս կողմէն Գեսարիոյ աթոռը Գրիգորի ձեռնադրութիւն տալով Հայոց աթոռը հիմնած չէր լիներ: Գեսարիա չբրաւ ինչ որ սովորաբար ըրած են կազմեալ աթոռներ քրիստոնէական աշխարհակալութեան ոճով: Ուրիշ տեղեր յատկապէս եկեղեցական պաշտօնեաներ յղուած են քարոզելու՝ այնպիսի երկիրներ՝ ուր քրիստոնէութիւն

մտած չէ, և այդ պաշտօնեաներ երբ նոր հաւատացեալներ կը շահեն՝ իրենց հետ մէկտեղ նորա ևս հպատակ կընեն այն աթոռոյն, որոյ կողմանէ առաքուած են: Գեսարիա ոչ քարոզիչ և ոչ պաշտօնեայ յղեց ի Հայաստան, և ոչ ևս Հայաստան քրիստոնէութիւն չմտած մի երկիր էր, ըստ վկայութեան բոլոր քրիստոնէութեան: Հայոց քրիստոնէութեան վերաբարձումը իւր մէջէն եղաւ առանց ուրիշ աթոռոյ միջամտութեան, և Հայր իրենց թագաւորով իրենք ընտրեցին իրենց առաքելական աթոռոյն յաջորդը և իրենց եկեղեցւոյն զլուսը, և պարզապէս հոգևոր շնորհաբաշխութիւն առնելու համար դիմեցին Գեսարիոյ աթոռոյն: Չեռնադրութեան յիշատակը պահող պատմութիւնն ևս կը ճանչնայ այդ բացատրութիւնը, զի ձեռնադրող Ղեռնդիոսի բերանով կը վկայէ. «Եւ արդ քանզի քեւ ծագեաց արեգակն արդարութեան Քրիստոս ի դոսա, և դու ընտրեցար ի տեղի ընտրելոց սրբոց առաքելոցն Բարթողիմէոսի և Թագէոսի» (Ագաթ.): Ուրեմն նախ Հայոց դարձին կամ լուսաւորութեան սկզբնաւորութիւնը իրենց կը պատկանի և ոչ Գեսարիոյ աթոռոյն. և երկրորդ՝ Հայք առաքելական աթոռ ունէին և Գեսարիոյ իշխանութեամբ նոր աթոռ չէ հաստատուած: Որ ինչ և լինին առաջին երեք դարերու Հայ քրիստոնէութեան վրայ պատմաբանից կարծիքները, նորա ստուգութիւնը ևս կասկածանաց ներքև չէ կարող ընկնել և մեզ աւելորդ է այդ կէտը փաստաբանել:

Գրիգորի ստացած ձեռնադրութեան ոչ նոր հաստատութիւն այլ Հայոց առաքելական աթոռոյն վերանորոգումը լինելը կը հաստատուի նոյն իսկ գործողութեան արդիւնքէն: Գեսարիոյ աթոռը ոչ այն ատեն և ոչ յետոյ երբէք միջամտութիւն ըրած չէ Հայոց եկեղեցւոյ գործերուն, և երբէք հսկողութեան իրաւունք վայելած չէ: Գրիգոր ինքնին կը տնօրինէ և կը հրամայէ ամեն բան, ե-

պիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ կը ձեռնադրէ, մինչև իսկ իւր ձեռաց ներքև փոքր կաթողիկոսութիւններ կը հաստատէ, եկեղեցական կանոններ և ծէսեր կը կարգադրէ տեղական աւանդութիւններ պահելով և ընդհանուր քրիստոնէութեան սովորութեանց հետեւելով. այնպէս որ Հայոց եկեղեցւոյ վարչութիւնը, դաւանութիւնը, ծէսն, ու կանոններն յունականին կամ ընդհանրականին նմանութիւնը ունենալով հանգերձ, ամբողջական ընդօրինակութիւնը չին, և ինչ որ աւելի յունականին մօտ է, աւելի հինգերորդ դարու Թարգմանչաց՝ քան թէ չորրորդ դարու Լուսաւորչին գործն է: Ինչ որ Հայ եկեղեցւոյ յատուկ սովորութիւններ են, մեք ազգային աւանդութեամբ ամենքն ևս Լուսաւորչին կընծայեմք, որով թէ Լուսաւորչի միանկախ եկեղեցւոյ գլուխ լինելը կը հաւաստեմք, և թէ մեր առաքելաց աւանդութիւնները Լուսաւորչով մեզի հասած կընդունիմք, զի նա եղաւ իսկապէս Հայաստանեայց եկեղեցւոյ երկրորդ առաքեալ, և ուղղափառ եկեղեցւոյս Լուսաւորիչ, և առաքելական աթոռոյս իշխանութեան վերանորոգիչ և կարգադրիչ:

### 9. ՇԻՆՈՒԹԻՒՆՔ

Գրիգոր Լուսաւորիչ Կեսարիոյ մէջ ձեռնադրուելէ յետոյ, այսինքն բոլոր եկեղեցական աստիճանները դըպրութենէ մինչև եպիսկոպոսութիւն ընդունելէ յետոյ գընաց Սեբաստիա, ուր և մի ժամանակ մնաց, (Գլաւ. 24) և այսմ պատճառ դրինք արդէն նոյն քաղքին մէջ ունեցած ազգակցական յարաբերութիւնները: Յիշեալ երկու քաղաքներէն ևս գործակից պաշտօնեաներ ընտրեց և առաւ, և նորէն իւր երկիրը դառնալու համար Կարնոյ և Հարքայ ճանալով իջաւ Տարոն, որ Հայոց հեթանոսական կրօնքին մեծ կեդրոններէն էր իւր Աշտիշատով և Ինսակ-

նեան բազմիններով Աշխարհագումար տօներով: Այն տեղ հեթանոսութիւն աւելի ամուր էր և Գրիգոր ասեց դիմագրութեան հանդիպեցաւ. ինքը խաչով և նախարար բանակներով օրինաւոր պատերազմ մղեցին քուրմերու դէմ և ուր որ հեթանոսութեան կեդրոն եղած էր բրիստոնէութեան ևս մեծ կեդրոն կազմեցին զետեղելով այնտեղ Ս. Յովհաննու Կարապետի և Ս. Աթանազիոսայ եպիսկոպոսի մասունքները, զորս իբրև հոգևորական նուէր ընդունած էր Կեսարիոյ հայրապետէն. Ս. Կարապետի Մասունքը ըստ աւանդութեան Յովհաննու աւետարանչի ձեռօք փոխադրուած է Հրէաստանէ յԵփեսոս, և Փլաբիանոս եպիսկոպոսի ձեռօք մասամբ Եփեսոսէ ի Կեսարիա բերուած, և Լուսաւորչի ձեռօք դարձեալ մասամբ Կեսարիայէ Տարոն փոխադրուեցաւ: Իսկ Ս. Աթանազիոսայ նոյն ինքն Գրիգորի աներձագն էր և սորա մասունքը գուցէ ընտանեկան իրաւամբ ստացած էր Լուսաւորիչը: Տարոնոյ մէջ հրեք տեղ դրաւ Լուսաւորիչը սուրբ նշխարաց մասերը, այսինքն է Ս. Կարապետ Իննակնեան բազմիններու տեղ, Ս. Յովհաննէս Եղրդուտ կոչուած տեղը, որ հաւանաբար ուրիշ նշանաւոր մի բազմին էր Տարոն դաշտին հարաւակողմը, և Մատնաւանք Աշտիշատայ ստորոտը: Նշխարները զետեղուեցան հողի մէջ մի մի տապան կազմելով, ինչպէս էր հին եկեղեցւոյ սովորութիւնը վկայից ոսկրները պատուել ի տապանի, և ոչ երբէք տուփերու և շարժական անօթներու մէջ: Իսկ Աշտիշատայ մէջ մի մեծ եկեղեցի շինեց, որ առաջին եղաւ և Մայր Եկեղեցւոյ անուն ստացաւ:

Այս և սորա նման փառաւոր կոչումներ կարծել տուին ումանց օտարազգեաց (Գեղեք. 59) թէ Հայոց եկեղեցական կեդրոնը Աշտիշատ եղած է և ոչ Վաղարշապատ, և թէ Էջմիածինը չէր Հայոց Մայր Աթոռոյն տեղը Լուսաւորչի ժամանակ: Սակայն եթէ այս գրութիւնը

ճշմարիտ լինէր, պէտք էր վերիվայր ընել բոլոր ազգային աւանդութեանց արդիւնքը, բայց բարեբաղդաբար կրօնական սրբավայրեր ունենալ հայրապետական աթոռէն դուրս ևս դժուար չէ։ Աթոռը երկրի մայրաքաղաքի մէջ և արքունական գահի մօտ պէտք է լինէր և եղաւ, և Աշտիշատ շէր յայնժամ Հայոց մայրաքաղաքը այլ Վալարշապատ. իսկ կրօնական կեդրոններ հաստատուեցան ուր որ հեթանոսական պաշտամանց կեդրոններ կային. և ոչ միայն Աշտիշատ, այլ և Բագաւան և Երէզ և Հանի և ուրիշ կուսապաշտական կեդրոններ հաւասար կերպով նկատողութեան առնուեցան և իբր ստացութիւն Լուսաւորչին շնորհուեցաւ մեծ քրմապետին իրաւանց ժառանգութեամբ և մեծ հայրապետի աթոռ և կալուած և բնակութիւններ հոգան։

Վերը պատմուած եղելութեանց ժամանակամիջոցը ճշդելու համար երկու թուականներ կը գտնեմք պատմութեան մէջ։ Զենոք կը յիշէ (Գլակ. 35) նաւասարգի մէկը, որ 302 տարին կընկնի սեպտեմբեր 12-ին, և Ագաթանգեղոս կը յիշէ (Ագաթ. 507) սահմի 7, որ կը պատասխանէ նոյեմբերի 17-ին։ Այս թուականը Գրիգորի Տարոնի մէջ գործունէութեան վերջին օրն է, յորում բազմաթիւ անձանց մկրտութիւնը կը կատարէ Արածանույ կամ Ստորին Եփրատայ գետի մէջ։ Տեսիլքի թուակականէն հաշուելով 10 ամիսներու միջոց կը մնայ, որ բաւական է պարունակել ընտրութիւնը, Գեսարիայ ուղևորութիւնը, ձեռնադրութիւնը, Սեբաստիա երթալը, Տարոն գալը, և այնտեղի զանազան գործողութիւնները։

Լուսաւորիչը Տարոնէ կանցնի Բագրևանդ, որ դիւրին և բնական ճանապարհ է և երկու մեծ կրօնական պաշտամանց կեդրոնները, Աշտիշատն ու Բագաւանը իրարու կը կապէ։ Այնտեղ կը հասնի իրեն Տրդատ և Բագաւանայ Ս. Յովհաննու տաճարի մօտ, նպատ լերան

ստորոտը տեղի կունենայ Տրդատայ մկրտութիւնը, ուր և սեպագեալ մի քար կը ցուցուի մինչև այսօր և Արձան Տրդատայ կը կոչուի: Հաշիւէն շատ հեռացած չեմք լինիր, եթէ ամսօրհայ պահքն ևս (Աղաթ. 615) ի նկատի առնելով, որ յիսնակաց պահոց հետ կը համեմատի, Տրդատայ մկրտութիւնը դնեմք նոյն իսկ Քրիստոսի աստուածայայտնութեան տօնին, 303 յունվար 6-ին:

Սոյն այս 303 տարւոյ սկիզբները կը հասնին Գրիգոր և Տրդատ Վաղարշապատ մայրաքաղաքը և զըլխաւոր գործերնին կը լինի այլ ևս Մայր Եկեղեցւոյ նիւթական և բարոյական շինութիւնը: Էջմիածնի տաճարի շինութիւնը յետաձգուած էր կուսանաց վկայարաններու շինուելուն առթիւ՝ թողլով որ պաշտօնական գործը պաշտօնական հովուապետի ձեռք լրանայ: Գրիգոր շատ տաճարներ կառուցեր էր Այրարատ հասնելէն առաջ, սակայն ժամանակագրական յառաջնութիւնը պաշտօնական առաւելութիւն չէր տար. և Միածնի Իջման տեղը նահմանեալ էր ի սկզբանէ լինել Մայր եկեղեցի Հայրապետութեան Հայոց, որ այս առթիւ կը փոխանակէր Թագէտսի Արտաղեան աթոռոյն տեղը: Էջմիածնի մայր եկեղեցին նուիրեալ է յանուն Ս. Աստուածածնի, և Աստուածածնի նախադոյն տօնը Փոխման կամ Ննջման տօնն է: Արդ այն կարգադրութիւնը, որով Ս. Աստուածածնայ տօնի նախընթաց օրը Զոդակաթի յիշատակ կը կատարեմք, ներքին աւանդական կապ ունի տօնի հետ, իբր զի շաբաթ օր մայր տաճարի նաւակատիքն է և կիրակին նոյն տաճարին անուանական տօնն է: Այս աւանդութեան հիմնուելով և 303 տարւոյ օգոստոս 15 կիրակի եղած լինելը հաշուելով, սոյն այս օրը պէտք է նշանակեմք իբր օր տարեկանաց Կաթողիկէին Սուրբ Էջմիածնի: Լուսաւորչայ հայրապետութեան սկզբնաւորութեան համար Խորննացին կըսէ թէ եղած է «յեօթն և ի տաս-

ներորդի ամի թագաւորութեան Տրդատայ» (Խոր. Բ 91): Արդ եթէ թագաւորութեան թուականը 287 համարեմք, կը հասնի ի 304, բայց արդէն երրորդ ամ Դիոկղետիանոսի կսկսի ի 286, և միւս կողմանէ երբ մի դէպք միւս դէպքով կը ժամանակագրուի, սկսուած տարիներ իբր ամբողջ կը յիշուին, և մին միւսի վրայ գումարել ուղիղ չլինիր: Հետեւաբար Դիոկղետիանոսի երրորդ տարին և Տրդատայ եթնետասներորդ տարին, քսան ամբողջ տարիներ չեն, և կարդարանայ ժամանակագրութիւնը եթէ Գրիգորի ձեռնադրութիւնը դնեմք 302-ին և մայր տաճարի շինութիւնը 303-ին:

#### 10. ՀՈՎՈՒԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Լուսաւորիչը ձեռնադրութեան տարին 62 տարեկան յոգնած մարդ էր, և չարչարանքներով և վիրապի տառապանքներով վշտալից կեանք ունեցած և տկարացած էր: այսու հանդերձ լուսաւորութեան առաջին տարիներու մէջ կը գտնեմք ի նմա գործունեայ մի կեանք. բայց քիչ ետքը պատմութիւնը կը յայտնէ թէ Լուսաւորիչն առանձնական և խաղաղական կենաց սիրող կը դառնայ և ժողովրդական հոգերէն փախչելով ճգնաւորական կենաց կը հետևի: Նկատելով առաքելական կենաց մեծութիւնը հարկաւ չեմք կրնար ըսել թէ Լուսաւորիչ ճգնաւորութիւնը եկեղեցական սլաշտաման կը նախագասէր, այլ թէ իրօք տկարացած էր և աշխատութեանց բեռը իրեն ծանր և անյարմար կը դառնար:

Աստի կը ծագի Լուսաւորչին մի օգնական կամ փոխանորդ տալու խորհուրդը: Տաճատ Աշոցեան Գրիգորի Կեսարիոյ կեանքին ծանօթ անձը և որ Գրիգորի վիրապի դատապարտուելուն պատճառ եղած էր, այս անգամ տեղեկութիւն կուտայ նորա երկու գաւակներ ունենայուն

և միայն կրօնաւոր լինելուն վրայ (Խոր. Բ. 82): Զարմանալի է ապաբէն Գրիգորի Գեսարիա երթալովն, հանդերձ տղոց մէջ տեղ չեղնելը և անոնց գոյութեան անծանօթ մնալը. բայց դիպուածոց շփոթութեան առջև անհարին չէ: Թագաւորի հրամանով Գեսարիայէ կը բերուին երկու գաւակներն (Ազաթ. 437), և արքունի պատուիրակներ Գրիգորը ճգնարանէն հանելով Արիստակէսը, որպէս կրտսերը, կրօնաւոր լինելուն համար առաջ ձեռնադրել կուտան յեպիսկոպոսութիւն (Ազաթ. 439), որ այնուհետև կը լինի իւր հօր անբաժին ընկերը (Ազաթ. 642), և անոր գործակիցն ու եպիսկոպոսակիցը (Բուզ. 6), և Լուսաւորիչ համարձակ կը վայելէ առանձնութեան հանգիստը:

Ոչ մի պատմագիր չճշդեր Արիստակէսի ձեռնադրութեան տարին, միայն գիտեմք թէ Լուսաւորչի որդիք իրենց հօր մօտ չեկան երբ սա առաջին անգամ Տրդատայ ծառայութեան մէջ Գեսարիայէ անցաւ, և ոչ էլ յետոյ երբ ձեռնադրուելու համար Գեսարիա եկաւ (Խոր. Բ. 80): Լուսաւորչի դառնալէն յետոյ մի միջոց ևս դաւակաց խօսքը չլինիր: Սովորաբար Արիստակէսի ձեռնադրութիւնը կը դրուի 316-ին, սակայն հաւանաբար մանուկ Գրիգորիսը ձեռնադրուեցաւ 315-ին, և պէտք է որ Վրթանէս և Արիստակէս աւելի կանուխ եկած լինէին, հետեւաբար աւելի յարմար է Արիստակէսի ձեռնադրութիւնը դնել 306-ին, երբ ինքն արդէն 42 տարեկան էր:

Հայոց դարձին յարակից է Վրաց դարձը: Ի նկատի առնելով պատմութեան ինչ ինչ պարագաները, ինչպէս են Վրաց իշխան Միհրանի Տրդատի արկածէն վախնալը, և նունէ առաքելուհունց կուռքերը կործանելէն ետքը մինչև որ եկեղեցական մի հովիւ հասնի պարզապէս մահեաններուն տեղ խաչեր կանգնելու համար Լուսաւորչէն ստացած հրահանգը (Խոր. Բ. 86), պէտք է ասել թէ

Վրաց դարձը եղած է Հայոց դարձէն անմիջապէս ետքը  
 Լուսաւորչի ձեռնադրութենէն յառաջ:

Իսկ Աղուանից դարձին համար կը գրէ Գաղանկայ-  
 տուացին, թէ Ուռնայր թագաւոր Հայաստանի մէջ մկր-  
 տուելով իր երկիրը դարձաւ և զայն լուսաւորեց (Գաղն. Թ.):  
 Թերևս այդ դարձը հետևանք է այն յաղթութեան, զոր  
 Տրդատ տարաւ Աղուանից վրայ Գոստանդիանոսի դարձէն  
 քիչ յետոյ, իբր 315 թուին: Նոյն ժամանակին Լուսաւոր-  
 չի թուը Գրիգորիս Աղուանից խնդրանօք իրենց եպիս-  
 կոսլոսապետ և կաթողիկոս ձեռնադրուեցաւ, տակաւին  
 21 տարեկան եղած ատեն «վասն հոգեկիր առաքինի ար-  
 գասեայն և զղիտութիւն Աստուծոյ յանձին կրելով»  
 (Բուլ. 10):

Լուսաւորչի ձեռնադրած եպիսկոպոսներուն թիւը 400  
 կը դրուի սովորաբար (Աղաթ. 634), թէպէտեւ Ձեներ  
 620 պաւառներ կը յիշէ, որոց մի մի եպիսկոպոս պէտք  
 էր ձեռնադրել (Գլակ. 13): Օտար վիճակագիրք Մեծ Հայոց  
 աթոռը յիշած ատեննին կասեն թէ «ունի քաղաքս և բեր-  
 դըս երկերիւր» (Աթոռ. 49), որ է ասել 200 եպիսկոպո-  
 սարան: Մեծ Հայոց 15 նահանգներ 191 դաւաւներ կը  
 պարունակեն, որ իբր 200 եպիսկոպոսարան ասել է. և  
 Վրաց և Աղուանից կողմերն եւս հաշուելով, և Ագաթան-  
 գեղոսի յիշած Խաղտէք, Մասքութք, Միջագետք և Ատրը-  
 պատական նահանգներն եւս աւելցնելով (Ագաթ. 624), և  
 բացառիկ կերպով ձեռնադրուածներն եւս համրելով 400  
 թիւը բնաւ չափազանց չի լինիր:

Լուսաւորչի առաքելական և հովուապետական գոր-  
 ծունէութենէն մանրամասնութիւններ հասցրած չէ մեզ  
 պատմութիւնը, այլ մեծ գործեր ինքնին կը խօսին: Դար-  
 ձի պարզայն հրաշալի դիպուածներու առջև տարօրի-  
 նակ մի կերպարան ստացաւ, բայց նորադարձները խրա-  
 տել և ուսուցանել, կանոններու և օրէնքներու հնազան-

դեցնել, նուիրապետութիւն և ծխակատարութիւն հաստատել, քրիստոնէութիւնը ամրակուռ հիմերու վրայ բարձրացնել, ամբողջ մի եկեղեցի իւր ամեն հանգամանքներով բարեկարգել և բարեզարդել, այնպիսի մի մեծ գործ է, որու կարեւորութիւնը երկար բացատրութեանց չկարօտիր. և այդ մեծ գործը կը կատարուի ազգի մէջ իւր իսկ ոյժերով. առանց մի ուրիշ եկեղեցւոյ ձեռնարկութեան և գործակցութեան, և այսմ անստելի փաստեր կը մնան Հայ Եկեղեցւոյ ինքնատիպ նկարագիրը և նոյն իսկ հեթանոսական զեղծմանց բաւական ժամանակ քրիստոնէական հաւատոյն հետ միասին սպրելը:

Թէ որչափ Լուսաւորիչը կարողացած էր ամուր կերպով քրիստոնէութիւնը Հայոց մէջ հաստատել, կը քաղեմք այն նշանաւոր գործէն, զոր արտաքին պատմութիւնն հասուցած է մեզ (Յւսեբրիոս): Մարտիմինոս Դաժ Հռովմայ դահակից կայարններէն մին, լսելով թէ Հայք բոլորովին քրիստոնեայ եղած են, պատերազմ բացաւ անոնց դէմ Յ12-ին, որպէս զի նուաճէ և դարձեալ հեթանոսական նշանաւոր ստիպէ: Հայոց կրօնական պատերազմներուն անդրանիկը մղուեցաւ Գրիգորի ներշնչմամբ և Տրդատայ առաջնորդութեամբ. և հողոյ և մարմնոյ քաջութիւնը միացեալ դէմ դրին յարձակման. յաղթեցին և վանեցին և ցրեցին Հռովմայեցւոյն խորհուրդը:

#### 11. ՀՌՈՎՄ ԵՐԹԱԼՈՒ ԶՐՈՅՅԸ

Աշխարհի վրայ ոչ մի տեղ քրիստոնեայ պետութիւն չկար, երբ ի Հայս քրիստոնէութիւնը պետական և տիրող կրօնը եղած էր. եկեղեցին դեռ ամեն կողմ հալածանաց ներքոյ էր, երբ ի Հայս արդէն յաղթական դիրք ստացած էր. Հայոց լուսաւորութենէն և Տրդատայ քրիստոնէութեանէն տասնումէկ տարի յետոյ տեղի ունեցաւ Կոստանդի-

Նոսի դարձը և քրիստոնէութեան տրուած ազատութիւնը 312-ին, որ տարին Մարսիմինոս Գաթ յետին ճիգ թափեց Հայոց դէմ պատերազմելով: Այդ դիպուածներուն իբր յարակից կը պատմուի յոմանց, թէ Տրդատ թագաւոր և Գրիգոր հայրապետ գնացած լինին ի չռովմ, Կոստանդիանոսի դարձը շնորհաւորելու և բարեկամութիւն հաստատելու Բաց աստի կաւելցուի, թէ այս առթիւ Սեղբեստրոս հայրապետն չռովմայ Գրիգոր Լուսաւորչին շնորհեց պատրիարքական կամ կաթողիկոսական, այսինքն հայրապետական իշխանութիւն և աստիճան և պատիւ, և թէ այս շնորհման գրաւոր հաստատութիւնն ևս տրուեցաւ *նաշանց թողութիւն* կոչուած գրութեամբ, որի պատճէնն ևս յայտնի է և հրատարակուած և սրուն չռովմէականք մեծ ծանրակշռութիւն կընծայեն, անոր մէջ չռովմայ աթոռոյն փառաւորութիւնները կարդալով, իսկ այլր ոմանք կընդունին նոյն գրութիւնը՝ կարծելով այնու դիւրացնել Հայոց կաթողիկոսութեան ծագման և ինքնազուլս ազատութեան բացատրութիւնը:

Կարծեցեալ պատմութեան մանրամասնեայ պարագաները կաւանդուին այսպէս: Տրդատ կըլսէ Կոստանդիանոսի դարձը և կուզէ հրթալ տեսակցիլ և խնդակցիլ. Գրիգոր հայրապետն ևս կառնու ի միասին. և բազմաթիւ բանակ էլ ուղեկից առնելով և ցամաքի ճանալով Կովկասները կանցնի և Սեւ ծովով հիւսիսակողմի երկիրներէն ճանապորտելով կը հասնի չռովմ, ուր մեծ պատիւ և ընդունելութիւն կը գտնէ Կոստանդիանոս կայսրէն, և Լուսաւորիչն ևս կը պատուուի իբր կենդանի նահատակ թէ կայսրէն և թէ Սեղբեստրոս հայրապետէն: Երկու թագաւորներ և երկու հայրապետներ իրարու հետ սէր և բարեկամութիւն կը հաստատեն և սիրոյ և ուխտի գիր կը ստորագրեն գրիչը Հաղորդութեան բաժակին թաթխելով: Սեղբեստրոս կուզէ մեծ ու նոր պատիւ տալ Լուսաւորչին,

և հայոց աթոռը պատրիարքութեան կը բարձրացնէ, և ուրիշ աթոռներու հնազանդութենէն կազատէ և կուտայ Գրիգորի կաթողիկոսական ձեռնադրութիւն: Ուրիշ շատ ընծաներ և պատիւներ եւս կը տրուին Հռովմայեցոց կողմանէ, և արքունական փառօք և ծովային ճանապարհութեամբ Գրիգոր ու Տրդատ կը դառնան իրենց երկիրը:

Այդ պատմութիւնը երեք մաս ունի. 1. Տրդատայ և Գրիգորի Հռովմ երթալը. 2. հայոց հայրապետութեան Սեղբեստրոսէ շնորհուիլը. 3. Դաշանց թուղթին վաւերականութիւնը: Այդ երեք կէտերէն առաջինը կրնայ ստոյգ լինել առանց վերջիններուն, կամ առաջինները կրնան ստոյգ լինել առանց վերջինին. սակայն ըստ մեզ երեքն էլ եւս հաւասարապէս ճշմարիտ չեն և վերջին ժամանակաց մէջ ստեղծուած զրոյցներ են: Արդէն ժամանակն իսկ հրնար չէ որոշակի ճշդել. որովհետև սովորաբար կը գրուի ի 318 կամ 319, Արիստակէսի ձեռնադրութիւնը ենթադրելով ի 316, իսկ ըստ այլոց կը գրուի ի 311, երբ դեռ Կոստանդինուսի դարձը եղած չէր, կամ ի 312, երբ Հռովմայ հայրապետը Սեղբեստրոս չէր այլ կամ Եւսեբիոս կամ Միգրիադէս, որով հարկ կը լինի Սեղբեստրոսի անունը ջնջել, թէպէտ և զրոյցը սերտ կապուած է այս անուան հետ:

Նախ և առաջ Դաշանց թուղթին անվաւեր գրութիւն լինելը բոլոր մատենագրական զննութիւնը յայտնապէս կը ցուցնեն, և ինչ էլ լինի մեզմէ առջիններուն կարծիքը, այժմ այլ եւս ուսումնական մի անձ չկայ, որ նորա վաւերականութիւնը պաշտպանէ: Գրուածքի լեզուն, ոճը, գործածուած նոր բառերը, յետին ժամանակաց դէպքերու յիշատակութիւնը, հին պատմագրաց մէջ անունն անպամ ծանօթ չլինելը, և այլ այսպիսի բննադատական փաստեր, այնպէս աչքի ընկնող բաներ են, որ Հռովմէա-

կանութեան ամենազերմ պաշտպաններն իսկ լրած են այլ  
ևս Դաշանց թողութիւն դատը:

Հայոց կաթողիկոսութեան Սեղբեստրոսէն շնորհուիլն  
ևս չէ կարող պաշտպանուիլ, քանի որ հաստատուած է  
Հայոց Եկեղեցւոյն Առաքեալներէն հիմնուած և իսկապէս  
առաքելական լինելը: Թող որ պատրիարքութեանց բաժան-  
ման ձևն ևս չնհրեր, որ Հռովմ կարենայ իշխանութիւն  
գործածել ուրիշ պատրիարքութեանց սահմաններու վը-  
րայ և կայսրութենէ դուրս եղող երկիրներու վրայ, և  
անտեղի է ենթադրել, որ Հռովմ Կեսարիոյ կամ Անտիոքայ  
աթոռներու հպատակութենէն հանէ մի աթոռ, որ նմին  
հպատակ կենթադրուի: Աթոռներու ազատութեան և հը-  
պատակութեան ձևերը ծագած են իսկապէս քաղաքական  
բաժանումներէ, և անկէ ետքը քարոզչական աշխարհակա-  
լութենէ, և եթէ այդ գլուխներով հպատակութիւն չհաս-  
տատուիր՝ ի դուր է ուրիշ պատճառներով յարաբերու-  
թիւններ ստեղծել: Հայաստանեայց ուղղափառ սուրբ ե-  
կեղեցւոյն ինքնուրոյն հայրապետութիւնը նախնական է,  
վասն զի առաքելական հիմնարկութիւն է, վասն զի կայս-  
րութեան քաղաքական բաժանումներէն դուրս է, վասն  
զի ուրիշ աթոռոյ քարոզչութեամբ աշխարհակա-  
լուած չէ:

Ճանապարհորդութեան կէտին գալով, Լուսաւորչի  
Հռովմ երթալը հաւասարապէս ամենն չյիշուիր, և շա-  
տուր պարզապէս Տրդատայ երթալը կը յիշեն և Լուսա-  
ւորիչը կը լռեն. նոյնպէս սիրոյ և խաղաղութեան վրայ  
խօսելով պարզապէս քաղաքականը կ'իմանան, որով Լու-  
սաւորչի երթալը ինքնին կը հերքուի:

Իսկ լոկ Տրդատայ երթալուն գալով, այդ ևս յայտ-  
նապէս մի շփոթութեան արդիւնք է: Մի օտար թաղա-  
ւորի Հռովմ երթալը այնպիսի մի մեծ պատահար էր, որ  
հռովմայեցի պատմագիրք չէին կարող զանց ընել: Եւ ի-

բաւցնէ եւս երկարօրէն կը պատմեն նորա Հայոց մի Տըր-  
դատ թաղաւորի Հռովմ դալը, նորա ճանապարհութեան  
պարագաները, Հռովմի մէջ կատարուած հանդէսները, այդ  
առթիւ եղած ծախքերուն քանակը, և Հայոց ու Հռով-  
մայեցոց միջև բարեկամութեան հաստատուիլը: Այլ այս  
ամենը տեղի ունեցած է Ներոնի կայսրութեան օրով ա-  
ռաշին դարու մէջ, և Հռովմայեցի պատմչաց Տրդատ ա  
նուանած այդ թաղաւորը մեր պատմութեան մէջ անյի-  
շատակ մնացած է: Այլ անուններու շփոթութեամբ ինչ  
որ ժամանակակից օտարք կանուխէն պատմած են առա-  
ջին դարու Տրդատին վրայ, մերոնք փոխադրեր են չոր-  
րորդ դարու Տրդատի վրայ, Ներոնը Գոստանդինոսի փո-  
խելով և քրիստոնէութեան պարագայն աւելցնելով, այլ  
միւս կողմէ ամենայն ճշտութեամբ կրկնելով հանդերձան-  
քի ճոխութիւնը. բանակի ընկերակցութիւնը, Գովասի և  
հիւսիսային երկիրներու ուղեկիծը և այլ մանր արտաքին  
պարագաները: Առ այս աւելցնելով ևս թէ այդ ճանա-  
պարհորդութեան պատմութիւնը Ազաթանդեղոսի յունարէ-  
նին մէջ գոյութիւն չունի, իրաւամբ կրնամք եզրակաց-  
նել, թէ՛ թէ Գաշանց թուղթը, թէ՛ հայրապետութեան  
Հնորհումը, թէ՛ Գրիգորի երթալը, թէ՛ Տրդատայ ուղեւո-  
րութիւնը, պարզապէս անհիմն և անվաւեր զրոյցներ են:

Մեր նպատակէն օտար կը սեպեմք այդ զրոյցի ծագ-  
ման և դտած ընդունելութեան վրայ ուսումնասիրութեանց  
միջամտիլ. և բաւական կը համարիմք միայն ակնարկել,  
թէ այդ բարեմիտ ձեւը երեւան եկաւ այն դարուն, յո-  
րում Հայեր մի կողմանէ Հռովմի արտաքին օգնութիւն-  
ներու հետամուտ էին և միւս կողմանէ իրենց հայրապե-  
տութեան անկախութիւնը Հռովմի առջեւ պաշտպանել  
կաշխատէին: Միեւնոյն հոգին կերելի թէ ներշնչած է  
վերջին ժամանակաց հռովմէադաւան հայ պատմաբաններն  
եւս, երբ այդ զրոյցի հիմամբ կը փափագէին հայոց ա-

Թուոյ ինքնուրոյնութիւնը պաշտպանել և միանգամայն  
 Հռովմայ աթոռոյ ձգտումները փայփայել:

12. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Լուսաւորչի ուղեւորութիւն արած չլինելուն իբր փաստ  
 ի դէպ էր յիշել նաև նորա ճգնաւորական կեանքը, զի  
 նոյն իսկ Վաղարշապատի բնակութենէն փախչող անձի  
 համար հաւանական չէ Հռովմի ոստանը այցելելու կն-  
 թադրութիւնը: Սոյն այս ճգնաւորական կենաց հետևանքն  
 եղաւ, ծերութեան տկարութիւնն ևս աւելցնելով, որ Լու-  
 սաւորիչը չկարողացաւ երթալ Նիկիոյ Ս. Ժողովոյն, թէպէտ  
 հրաւէր եկած էր Գոստանդիանոսի կողմանէ, այլ իւր որ-  
 դին Արիստակէսը յոյեղ իւր տեղը, ըստ ազգային աւան-  
 դութեան, թէպէտ և Նիկիոյ Ս. Հարց ստորագրութեանց  
 կարգին Արիստակէս իւր անուամբ գրուած է և ոչ իբր  
 փոխանորդ: Ժողովոյն փակուելէն յետոյ Արիստակէս դար-  
 ձաւ Վաղարշապատ բերելով իւր հետ Նիկիական հանգա-  
 նալին ու կանոնները, ուր յատուկ ժողով եւս դումարուե-  
 ցաւ և Նիկիական հաւատքը հանդիսապէս հաստատուե-  
 ցաւ և խոստովանուեցաւ:

Ազգային աւանդութեան մէջ ունիմք, թէ Նիկիական  
 հանգանակը Լուսաւորչայ ձեռօք բացատրութեան յաւե-  
 լուածներ ստացաւ և եղաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ  
 հիմնական դաւանութիւնը, զոր Լուսաւորիչը կնքեց և հաս-  
 տատեց «Իսկ մեր փառաւորեսցուք» հատուածով, որ ամ-  
 փոփումն է բրիստոնէական վարդապետութեան, և ուր ա-  
 ռաջին անգամ կը հնչէ «Սուրբ Երրորդութիւն» բացա-  
 տրութիւնը, որ նոյն իսկ Նիկիական հանգանակի մէջ կը  
 պակսի: Այդ աւանդական յիշատակը քննադատական զըն-  
 նութեանց հանդէպ չէ կարող տոկալ, զի մեր եկեղեցւոյ  
 մէջ գործածական հանգանակը ոչ թէ բուն Նիկիականն է

Լուսաւորչի յաւելուածներով ճոխացած, և ոչ էլ Կոստանդնուպոլսոյ Ս. Ժողովոյ հանգանակը, այլ Աթանասեան կոչուած հանգանակը, որով և Լուսաւորչի յաւելուածներուն տեղի չմնար: Բայց շատ լաւ կրնամք Լուսաւորչին վերագրել մեր եկեղեցւոյ մէջ այդ հանգանակին ընդունելութիւնը և սլաշտօնական կիրառութեան մտնելը: Իսկ «Իսկ մեր փառաւորեսցուք» յաւելուածն ևս բոլորովին մեզի յատուկ և միւս եկեղեցեաց անծանօթ մի մաղթանք չէ, որ կարող լինիմք ուղղակի մեր Լուսաւորչին յատկացնել անոր խմբագրութիւնը: «Յրրորդութիւն» բառին պալով, եթէ ոչ այդ մաղթանքի մէջ, դոնէ հասարակ կիրառութեան մէջ այդ բառը կարող եմք Լուսաւորչի ժամանակին վերագրել, որովհետև չէ վաղլում նորա մէջ հինգերորդ դարու ոսկեղէն դպրութեանց ճաշակը: «Յրրորդութիւն» որ ճշտիւ շարքի մէջ երկուքէ ետքը յաջորդող տեղը ունենալ կը նշանակէ, չէ տալիս Երեքանձնեայ Աստուածութեան խորհրդոյն մէջ սլարունակեալ երկից միասնական գոյութեան ճիշդ իմաստը, և ոչ էլ կը «Տմամսպատասխանէ միւս լեզուաց բացատրութիւններուն, որ աւելի լաւ կրնային թարգմանուիլ «Յոռակութիւն» բառով: Հինգերորդ դարէ առաջ ազգին մէջ ընդունուած կրօնական ուրիշ բառեր և բացատրութիւններ եւս ունիմք, որք նմանապէս լեզուական ճշգրտանութեան կողմէ թերի կրնան նրկատուիլ:

Խորենացին Արիստակէսի ժողովէն դառնալը սլատմելով կը յիշէ թէ նա ի միասին բերաւ «քսան կանոնեալ գլխովք ժողովոյն» որոշումները, և թէ Լուսաւորիչը «սուղ ինչ գլուխս յինքնէ ի կանոնս ժողովոյն յաւելու»: Աստի կրնամք հետեւցնել թէ Վաղարշապատու ժողովը նիկիական հաւատքէն զատ իւրացոյց եւս նիկիոյ Ս. Ժողովոյն բարեկարգական քսան կանոնները, յորս կան զանազան օրէնքներ եպիսկոպոսաց իրաւասութեան, եկեղեցւոյ պաշ-

տօնէից վարուց և գործոց, մեղաց ապաշխարութեան և այլ կարեւոր իրաց վրայ, որք և մինչեւ այժմ կը գըտնուին մեր Կանոնագրքի մէջ: Իսկ Լուսաւորչէ գրուած յաւելուածները պէտք է լինին «Կանոնք սրբոյն Գրիգորի առաքելոյ Հայոց» անուամբ նոյն Կանոնագրքին մէջ գըտնուածները, որք երեսուն կանոններ են և մեծ մասամբ մեղաց ապաշխարութեան վրայ կը խօսին: Ունիմք եւս «Սահմանագրութիւնք կարգաց և կանոնք սրբոյն Գրիգորի Պարթևի» անունով կանոններ, որք Կանոնագրքի մէջ անցած չեն: Պէտք չէ ենթադրել թէ այսպիսի կանոններ Լուսաւորչէն նիկիոյ Ս. Ժողովոյն տարին դրուեցան, լուսաւորութեան թուականէն քսանուչորս տարի հտըր, և ոչ էլ կարող ենք պնդել, թէ մեզի հասած կանոններ ուղղակի Լուսաւորչէն խմբագրուեցան, այլ թէ այսպիսի կարգադրութիւններ Լուսաւորչայ հեղինակութեամբ հաստատուեցան, գործածուեցան, աւանդութեան անցան, և յետ ժամանակաց Լուսաւորչայ անուամբ ի գիր առնուեցան:

Ի դէպ է այստեղ աւելցնել Լուսաւորչայ անուամբ մեզ հասած մատենագրութիւնը, որ Յաճախապատում անուամբ ծանօթ է, և Ագաթանգեղոսի մէկ մասը, որ «Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի» անուամբ կը պարունակէ Լուսաւորչի քարոզած և խօսած հաւատոյ ուսումները և կենաց կանոնները: Մատենագրական քննադատութիւնը չեն հաստատեր, որ այս գրութիւնը ուղղակի Լուսաւորչի երկասիրութիւններն ըլլան, և ոչ էլ մեք իրաւունք կզգամք հակառակը պնդելու: Մեզի բաւական է այդ մատենագրութեանց Լուսաւորչի անուամբ ճոխացած լինելը, և անոնց մէջ գտնել Լուսաւորչէն մեզի բարոզած հաւատոյ սկզբունքները, որք աւանդական պահպանութեամբ ի գիր առնուած և իբր նուիրական յիշատակ ընդունուած են:

Ժամագիրքին մէջ եւս «Աստուած մեծ» դանձի համար նշանակուած է թէ «ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ ասացեալ» է, բայց մատենագրական և քննադատական զննութիւնք անհնար կը գտնեն Լուսաւորչի ժամանակ այսպիսի մի քարոզ շարագրուիլը, և շատ հաւանաբար ի պատիւ Ս. Գրիգոր Լուսաւորչի շինուած է, կամ թէ «Լուսաւորչէ» բառը օտարամուտ յաւելուած է, և հեղինակը Գրիգոր հայրապետներէն մին է, Վկայասէրը կամ Պահլաւունին, վասն զի սոցա պարէն աւելի հին չի կարող լինել գանձը:

Բայց Լուսաւորչի ժամանակ եւս հայ հաւատացեալը առանց հայերէն ժողովրդական ազօթքի չէր կարող լինել, թէև հայերէն դպրութիւն և դիր չկար: Պէտք էր որ ինչ ինչ մայրժանքներ հայերէն լեզուով թարգմանուած և բերանացի աւանդութեամբ սերտուած լինէին և ժողովրդական բարեպաշտութեան պէտքը լրացնէին, օրինակի համար «Փառք Հօր», «Փառք ի բարձունս», «Սուրբ Աստուած», «Հաւատամք», և այլ այսպիսի անհրաժեշտաբար կարևոր կրօնից և հաւատոց արտայայտութիւններ պէտք էր Լուսաւորչի ձեռամբ և իշխանութեամբ հայերէնի վերածուած լինէին, զի անհնարին է ըմբռնել հայուն քրիստոնէութիւնը առանց հայերէն ազօթքի, և զի օտար լեզուներ չէին կարող բոլոր ազգին ընդհանրապէս ծանօթ և գործածական լինել: Սոյն դիտողութիւնը սաղմոսներու վրայ եւս պիտի տարածեմք, նկատելով որ ժամագիրքին մէջ գործածուն սաղմոսներ բաւական տարբերութիւններ ունին աստուածաշունչին բովանդակութեան մէջ պարունակեալ սաղմոսներէն: Չեմք կարծեր որ անտեղի լինի հետեցնել, թէ ժամագիրքին մէջ կը տիրեն շորբորդ դարու թարգմանութիւններ, իսկ աստուածաշունչի մէջ հինգերորդ դարու խնամեալ թարգմանութիւններ:

Այս ամենայն պզտիկ տեղեկութիւններ և դիտողու-

Թրններ կը բաւեն հաստատել, թէ Լուսաւորչի ժամանակ եւս Հայաստանեայց եկեղեցին կարեւոր կարգ ու կանոնէ զուրկ չէր, և ազգային եկեղեցոյ նկարագիրն ունէր:

### 13. ԿԵՆԱՑ ՎԱԽՃԱՆ

Սուրբ Լուսաւորչի առաքելական և հայրապետական կենաց վերջին մասը գրեթէ ժողովուրդէն անտես և բոլորովին հեռացեալ կանցնէր իրեն սիրելի առանձնութեան նուիրեալ: Նորա սովորական տեղն էր Գարնազի դաւառի Սեպուհ լեռը (այժմ Գոհանամ լեռ Քեմախու մէջ), ուր յառաջագոյն առանձնացած էր Ս. Մանէ կոյս Հռիփսիմեանց ընկերներին: Այդ կուսին ճգնարանը Մանեայ Այր անունով եղած էր Լուսաւորչին եւս սիրական առանձնարանը, ուստից երբեմն երբեմն կենէր իւր հոգևոր գաւակաց այցելել, և հետեւելով նախընթացաբար գրուած պատմութեան, մի վերջին անգամ եւս իջած էր և Վաղարշապատու մայրաքաղաքն ու մայրաթոռը եկած, Արիստակէսի նիկիոյ Ս. Ժողովէն դառնալուն հանդիսաւոր և նշանաւոր պարագային:

Պատմութիւնը չէ տալիս Լուսաւորչայ մահուան պարագաները, և բաւական կը սեպէ ըսել, թէ Մանեայ Այրին առանձնութեան մէջ փոխեցաւ առ Տէր առանց ուրուք տեղեկութեան, և նոյն այրի մէջ թաղուեցաւ անժանօթ հովիւներու ձեռք: Եթէ Լուսաւորչայ առանձնասիրութեան վրայ բարձր գաղափար չունենայինք, պէտք էր խստիւ մեղադրել Հայոց երախտամոռաց անհոգութիւնը, որ կարող կը լինէին մինչև իսկ անդիտանալ իրենց հոգևոր ծնողին մահը: Եթէ Լուսաւորիչ հաստատուն մի տեղ ունէր, սովորական այցելուներ և խնամողներ պէտք էր իմանային նորա մահը, և ոչ թէ պատահական հովիւ-

ներ, և պէտք էր ծանուցանէին իւր դաւակաց, և արքունեաց և ազգին, որպէս զի գոնէ երախտազիտութեան վերջին արտայայտութիւնը չզլացուէր աննման և բազմաբախտ հայրապետին: Բայց կերևի թէ Լուսաւորիչն ինքնին յատուկ և որոշ կամք ունեցած է իւր տեղը պահելու և իւր մահը ծածկելու, նոր ոմն Մովսէս որ իսրայելացոց անխորհուրդ սիրոյ արտայայտութենէն խուսափելով անծանօթ կը մեռնէր լեռան վրայ:

Մահուան թուականը մերձաւորաբար գտնելու համար միակ ծանօթ պարագայն այն է, թէ նա տակաւին կենդանի էր երբ 325 տարուոյ աշունին Արխտակէս կը դառնայր Նիկիոյ ժողովէն, թէ այդ առթիւ վերջին անգամ լինելով Վաղարշապատ եկաւ, և թէ այն օրէն յետոյ այլեւ շտեմնուեցաւ (Խոր. Բ. 90): Քիչ ետքը Լուսաւորչի մահը տեղի ունեցած պիտի լինի 325 տարուոյ վերջ և ձմեռուան սկիզբը:

Պատմագիրք և գաւազանագիրք հաստատապէս 30 տարի կուտան Լուսաւորչի հայրապետական իշխանութեան և 302 տարիէն սկսելով կը հասցնեն 332-ին: Սակայն այդ հաշիւը այսպէս ճշտողներ կը կարծեն, թէ Նիկիոյ Ս. ժողովը եղած է 331-ին, և ժողովին յաջորդ տարին Գրիգորի մահը գնելով կը հասնին ի 332: Սակայն քանի որ Նիկիոյ ժողովոյն թուականը ճշտուած է 325 տարուոյ ամառուան մէջ, Լուսաւորչայ մահն ևս պէտք է զնել նոյն տարուոյ ձմեռուան, լրացեալ 23 տարիներ հայրապետութեան մէջ ապրելով, այլ ոչ թէ նոյնչափ տարիներ հայրապետութիւնը կատարելապէս վարելով. զի 306 տարիէն սկսելով իրեն օժանդակ ունեցաւ որդին Արխտակէսը, և վերջին գոնէ 10 տարիներու մէջ ամեն պաշտօնավարութենէ ձեռնթափ եղած էր:

Լուսաւորիչն 239 տարին ծնած լինելով և մինչև 325 ապրած լինելով, մեր բացազրած և հաստատած

ժամանակագրութեամբ, մեռած կը լինի 86 տարեկան, որ դժուարիւմանալի ենթադրութիւն չէ:

#### 14. ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ

Նկատողութեան արժանի է, որ ամեն սուրբերու մահուան օրը տօնական լինելով, միայն Լուսաւորչի շրջ տօնը չունի, որ նշան է թէ իրօք Լուսաւորչի մահը իսկըզբան ծանօթ բան չէ եղած: Հնագոյն տօները եղած են վիրապէն ելնելը և նշխարաց գիւտը, իսկ վիրապ մտնելու տօնը աւելի ուշ հաստատուած է: Թերևս վիրապէն ելնելը նոյն իսկ իւր կենդանութեան ժամանակ տօնելի տարեդարձ եղած է, և իբրև Լուսաւորչի տօն շարունակած է մահուանէ ետքն ևս: Իսկ նշխարաց փափաքն ևս շատ մեծ եղած պիտի լինի, որ վերջապէս կը հաճի Աստուած յայտնել զայն Գառնիկ անուն մի ճգնաւորի, և այս հրաշալի պարագայն եւս հանդիսաւոր տարեդարձով կը տօնուի: Նշխարաց գիւտը կը դրուի սովորական և նոր հաշուոց համեմատ 441-ին, այլ մեք հաւանական չեմք դտնել այդ թուականը:

Երբ կը մեռնի Ս. Վրթանէս ըստ մեր հաւանական հաշուոյն 341-ին, կը թաղուի նա ի Թորդան Գարանաղեաց ըստ միաձայն վկայութեանց Խորենացոյն (Խոր. 24) և Բուզանդայ (Բուզ. 29), միայն թէ մինչ Խորենացին մարդարէական մեկնութիւն կուտայ այն տեղ թաղուելուն ուր յետոյ Լուսաւորչայ ոսկերք պիտի ամփոփուէին, Բուզանդ պատմական և յայտնի կերպով կասէ թէ «անդ առ մեծի հայրապետին Գրիգորի զսորա սուրբ զոսկերան հանգուցանէին»: Երբ կը մեռնի Ս. Արիստակէս 333-ին ըստ մեր հաւանական հաշուոյն կը թաղուի ի Թիլ Եկեղեցաց, և այդ զուկին իւր հօր մօտ չթաղուիլը կը ցուցնէ, թէ այն ատեն դեռ չկայր Լուսաւորչի գերեզմանը:

ի Թորգան, մինչ Վրթանիսի այստեղ հօրը մօտ թաղուիլը կը հաստատէ թէ ուրիմն Լուսաւորչի նշխարքը գտնուեցան Վրթանիսի կաթողիկոսութեան ժամանակ, և Սեպուհ լեռնէն բերուելով թաղուեցան ի Թորգան, որ Լուսաւորչի անձնական սեփականութիւնն էր արքունական շնորհմամբ: Գուցէ նոյն ինքն երանելի ճգնաւորն Գառնիկ, սուրբ Լուսաւորչին ձեռնասուն և անմիջական աշակերտ մի է, որ իւր հոգևոր հօր նշխարաց հետամուտ եղած է: Մարթ է ևս ասել, թէ նշխարք Լուսաւորչին աւելի կանուխ էլ անձանօթ չէին, բոլորովին ի Մանեայ այրն Սեպուհոյ, մինչ Վրթանիսի ձեռօր փոխադրուեցան ի Թորգան ի սեփական կալուած իւր տոհմին: Ըստ այսմ կասեմք թէ պատմութիւնն նորա համար շատ կարևորութիւն չտուաւ գիւտի նշխարաց թուականին, որովհետև պարզապէս սոխորական պայմաններու ներքև կատարուեցաւ: Որդւոց և թոռանց մի պատմութիւն եւս յայտնապէս Գիւտի նշխարաց պարագայն կը խառնէ Վրթանիսի կաթողիկոսութեան (Սոփ. 51), որ կատարելապէս կը հաստատէ մեր կարծիքը, և ոչինչ կը ստիպէ մեզ այլ ևս մի դար յետաձգել մի այդպիսի կարևոր դիպուած, ինչպէս նոր ժամանակագիրք կուզեն, որ անյարմար և անպատիւ ևս կը դառնայ երկար ատեն զուրկ և անհոգ ենթադրելով աղզը իւր Լուսաւորչին հանդէպ:

Թորգանի մէջ ամփոփեալ նշխարք չեմք գիտիւր երբ սկսան հանուիլ և ցրուիլ: Լուսաւորչայ Ս. Աջը եղած է հայրապետական աթոռոյ գանձն ու գորութիւնը և իբր պաշտօնական նշանակ նորա իշխանութեան, որով և նշանաւոր դեր ունեցած է կաթողիկոսական աթոռոյն տեղափոխութեանց մէջ: Էջմիածնայ մայրաթոռը կը պարծի ցարգ ճշմարիտ Ս. Աջով, որ կը գործածուի Ս. Խաչափայտի և Ս. Գեղարզի հետ Մեռոնի օրհնութիւնը կատարելու: Ուրիշ գլխաւոր մասունքներ Ներսէս Զինոզ

կաթողիկոսէ զեռեղուեցան Վարարչապատու Ս. Լուսա-  
ւորիչ կամ Զուարթնոց եկեղեցւոյն մէջ, որ աւերակ է  
այսօր Վարարչապատու մօտ և կը կարծուի իսկ թէ զեռ  
մասունքներ կը գտնուին շինութեան հիմերուն մէջ: Իսկ  
զուլին և ինչ ինչ ոսկերք և շղթայի մասը միջին դարու  
մէջ, սոյն այս Զուարթնոց եկեղեցիէն հայ կուսանաց ձե-  
ռօք փոխադրուեցան Նէպոլիս (Նապօլի) Իտալիոյ, ուր  
և յատուկ տաճար շինուեցաւ ի պատիւ Ս. Լուսաւորչին,  
որ և յարդ կը մնայ Ս. Գրիգոր Հայոց (Տ. Gregorio  
Armeno) անուամբ, և յարակից կուսաստանով, ուստի  
պակասած են այլ ևս հայ կուսաններ, և իտալացի կուսան-  
ներ կը բնակին անդէն. և մեծաւ պատուով կը պահեն  
Ս. Լուսաւորչին զուլսը ամփոփեալ գրեթէ բնական մե-  
ծութեամբ և հայրապետական զարդերով շինուած պղն-  
ձեայ և համակ ոսկեղօծ կիսարձանի մէջ, ինչպէս նաև  
ուրիշ ոսկերաց և շղթայի մասեր: Ս. Գրիգոր յատուկ  
ջերմեռանդութիւն կը վայելէ բարեպաշտ նէպոլսեցոց  
կողմէ, և Ս. Գենարիոս (Տ. Genario) եպիսկոպոսի հետ,  
որ Նէպոլսոյ առաջին երկնային պաշտպանն է, Հայոց  
Ս. Գրիգորն ևս քաղաքին երկրորդ երկնային պաշտպանն  
ճանչցուած է, և փառաւոր տօն ունի սեպտեմբեր 30-ին  
ըստ նոր տոմարի:

Իսկ մեր մէջ գլխաւոր տօնն է զիւտի նշխարաց  
յիշատակը Հոգեգալստեան երրորդ շաբաթ օրը, և հրա-  
մայեալ տօն կը պահուի բոլոր ազգի մէջ: Նոյնպէս  
հանդիսով կը կատարուին թէ վիրապ մտնելուն և թէ  
վիրապէ ելնելուն յիշատակները. առաջինը Մեծ պահոց  
հինգերորդ շաբաթ օրը և երկրորդը Հոգեգալստեան առա-  
ջին շաբաթ օրը: Նոյնպէս ի պատիւ Լուսաւորչին կը  
համարուին Միածնի իջման կամ Ս. Էջմիածնի տօնը Հո-  
գեգալստեան երկրորդ կիրակին. և Մայր տաճարի նա-  
ւակատեաց կամ ս. Զոզակաթի տօնը վերափոխման նախ-

ընթաց շարաթ օրը, վերջապէս վիրապի մէջ հրեշտակի հանապազօր այցելութենէն մի օր պակսելուն յիշատակը համբարձման շորթորդ օրը կամ թէ Երկրորդ ծաղկազարդ կոչուած յինանց եօթներորդ կիրակին: Իսկ ի պատիւ Ս. Լուսաւորչին յօրինեալ երգերու և շարականներու գեղեցկութիւնը և առատութիւնը նոր փաստ մի է ազգին դէպ առ իւր Լուսաւորչին ունեցած ջերմեռանդութեան, որոյ անունն սւ յիշատակը հանապազօր և ամեն օր շատ անգամ կը կրկնուի բոլոր գլխաւոր մաղթանքներու մէջ: Վերջապէս Հայն իւր եկեղեցին, իւր հաւատքն, իւր յոյսն, ու իւր սիրոյն բոլոր իղձերն հւս իւր Ս. Լուսաւորչին հետ կապուած է, և իւր այդ բոլորանուէր զգացմանց լրումն ու ամփոփումը կարտայայտէ, երբ իւր քրիստոնէութիւնն ամբողջաբար կը կոչէ **ՀՈՒՍԱՒՈՐՉԱՅ ՀՈՅՍ ՀՍԻՍՏՔԸ**, այն՝ զոր պարթեւագնեանն Գրիգոր տարածեց և ամբակուռ հաստատեց վեշտասան դարեր առաջ, և որ եղև ընդ բովանդակ դարս իւր հոգեծին որդւոց արթուն պահապանն, և որ ակտի պահէ նոցա անվրդով և անսասան մինչեւ ցլրումն ժամանակաց, և ակտի առաջնորդէ դէպի յաւիտենական երանութիւն:

